

ՓՈԹՈՐԻԿԵ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Լիբանանը հարուստ է փոթորիկը այսօր եւ վաղը՝ Կիրակի պիտի շարունակուի:

Տեղատարափ անձրեւներուն պատճառով տարբեր դիւղաքաղաքներուն մէջ ցանքերը ամբողջովին վնասուեցան, ինչպէս նաեւ Լիթանի գետը բարձրացաւ՝ ողողելով եզերքի արտերը եւ փճացնելով ցանքերը: Հեղեղներուն պատճառով Արեւմտեան Պեքալի մէջ 3 յարկանի նորակառուց շէնք մը փոշի եկաւ, ինչպէս նաեւ փոշի եկաւ Պաֆլիէի մզկիթին մէջ պատը:

Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերուն ներառւած Նեփալի Միքաթի երէկ Թրիփոլի սերային մէջ նախագահեց ժողովը մը, որուն ընթացքին քննարկուեցան նախանշեալ օրուան կառավարութեան տուած որոշումներուն գործադրութեան միջոցառումները:

Ժողովին ներկայ գտնուեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի ներկայացուցիչ զօր. Ուլիլիմ Մաթի, երեսփոխան ժիւտ Սամատ, հիւսիսի նահանգապետ Նասիֆ Քալուշ, ինչպէս նաեւ

բարձրաստիճան ալ պաշտօնատարներ: Քննարկուեցան քաղաքացիներու պաշտպանութեան եւ ապահովութեան, ինչպէս նաեւ երթելու եւ հաղորդակցութեան կապուած հարցեր:

Միքաթի խոստացաւ, որ հիւսիսի բոլոր շրջաններուն մէջ վերաշինութիւններ պիտի կատարուին, ինչպէս նաեւ անպատասպար մնացած ընտանիքներուն հատուցումներ պիտի տրուի:

Նշեմք նաեւ, որ Չահլէի, Հալպայի, Պալպէքի, Պասքիթայի, Քարթթապայի, Արզի, Պիթրի-նի, Պարուքի, Տէր Ահմադի, Թաննուրիի եւ էհտէնի մէջ ձիւնախառն փոթորակները եղաւ տիրական:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՆԵՐՔԻՆ գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարութեան երթելի հարցերու յատուկ յանձնախումբը երէկ պաշտօնապէս շրջաբերականով մը յայտարարեց, որ մինչեւ յառաջիկայ երկուշաբթի առաւօտեան ժամը 6:00 Քալիքէն Տըպպայէ երկարող դէպի Պէյրութ մայրուղին պիտի փակուի նորոգութեան աշխատանքներու պատճառով:

●ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ընկերութիւնը երէկ յայտնեց, որ յառաջիկայ օրերուն տարբեր շրջաններուն մէջ երկտրականութեան հոսանքի խնայողութեան յայտագիրը բարելաւուած պիտի արձանագրէ:

●ՆԱՊԱԹԻՒԻՒՄ մէջ փողոցները վերածուեցան լիճերու, ուր «ընկղմեցան» ինքնաշարժներ եւ ջուրերը ողողեցին վաճառատուներն ու շէնքերուն մուտքերը:

●ՀԸՐՄԵԼԻ մէջ քաղաքացիական պաշտպանութեան ուժերը շարունակեցին կոլուղիները բանալի, որպէսզի կարելի ըլլայ հակակշիռի տակ առնել կացութիւնը:

●ՊԵՔԱՍԻՒՄ մէջ անձրեւէն գոյացած ջուրը ողողեց բոլոր այգիներն ու արտերը, ուր ցանքերը փճացան:

ՀԱՄԱՐՏ ԸՆՈՒՋԱՅՆԱՅԻՆ ԸԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱՒ ԻՐ ԱՐԱՔ ՊԱՇՏՈՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԸՏՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ շեշտեց, որ Արաքական Լիկայի ընթացիկ վեհաժողովը եւ անկէ թիւնք արդիւնները կարեւոր են: «Մենք կը ջանանք արաքական միասնականութիւն մը կերտել եւ համաձայնիլ հիմնական քայլերու շուրջ», ըսաւ ան:

Համուտ յայտնեց, որ հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցած է Ալմերիոյ, Մարտի, Յորդանանի, Պահրէյնի, Քաթարի եւ Սուրիոյ արտաքին գործոց նախարարներուն հետ՝ քննարկելով Արաքական վեհաժողովը: Ան աւելցուց, որ Լիբանան կ'օժանդակէ Պահրէյնի՝ ամբողջացնելու վեհաժողովին շուրջ բոլոր հաղորդակցութիւնները:

Համուտ նկատել տուաւ, որ Երկուշաբթի օր պիտի մասնակցի Պրիքսէյի մէջ կայանալիք Երոպական Միութեան արտաքին գործոց նախարարներու ժողովին, որուն ընթացքին պիտի քննարկուին Իրաքի եւ Պաղեստինի տագնապները:

Անդրադառնալով փոփոխութեան փրանսակաւ վեհաժողովին հաղորդագրութեան՝ Համուտ ընդգծեց, որ Լիբանան կ'արժեւորէ երոպական եւ փոփոխութեան երկիրներուն կեցուածքները:

Միւս կողմէ, Համուտ վարչը՝ Կիրակի, պիտի ուղղուի Մալթիկա, ուր պիտի մասնակցի ոչ յանձնառու երկիրներու վեհաժողովին: Համուտի պիտի ընկերակցին արտաքին գործոց նախարարութեան քաղաքական հարցերու պատասխանատու Նաժի Ալի Ալի եւ Համուտի գրասենեակի տնօրէն Մոհամէտ Չալպ:

ՀԱՄԹ ՀԱՐԻՐԻԻ ՓՈԽԱՆՑԵՑ ԱՐԱՅԱԹԵՆ ԲԱՆԱՒՈՐ ՊԱՏԳԱՍ ՄԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորալթէի մէջ ընդունեց պաղեստինցի նախարար Նապիլ Շաաթը, որ վարչապետին փոխանցեց բերանացի նամակ մը պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատին:

Հանդիպումէն ետք Շաաթ յայտնեց, որ քննարկուած է քաղաքական կացութիւնը եւ աւելցուց, որ պաղեստինցիք կը դրուատեն արաքական վեհաժողովին Լիբանանի կատարած դերը ի նպաստ պաղեստինեան տագնապի լուծման:

Շաաթ ընդգծեց, որ վարչապետ Հարիրի փոխանցած է նաեւ պաղեստինեան հողերուն վրայ իսրայէլեան բռնարարները, որոնք անցած են կարմիր գիծը: Ան շեշտեց սակայն, որ հակառակ դժուար կացութեան պաղեստինցի ժողովուրդը պիտի շարունակէ իր պայքարը՝ աւելցնելով, որ Պաղեստին անպայման պիտի որոնարարական է միջազգային պօրակցութեան:

Յետմիջօրէին վարչապետ Հարիրի մեկնեցաւ Ֆրանսա, ուր այսօր պիտի ընդունուի նախագահ Ժաք Շիրաքի կողմէ: Կը նախատեսուի, որ վարչապետ Հարիրի այսօր երեկոյեան ուղղուի Մալթիկա մասնակցելու համար ոչ յանձնառու երկիրներու վեհաժողովին նախագահելով իրաւանեան պատուիրակութիւնը:

ՎԱՌԵԼԱՆԻԹԻ ՆՈՐ ՍԱԿԱՑՈՅՑ

Ուժանիթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտունի որոշումով՝ մէկ թիթեղ պէնպիսի սակը 300 լ. ոսկիի յաւելում արձանագրեց, մալուրը՝ 200 լ. ոսկիի, իսկ ֆիուլ օյլը՝ 4 տոյաքի:

Հետեւաբար վառելանիթի սակացոյցը ստացաւ հետեւեալ պատկերը.

98 օքթան ստանց կապարի պէնպիսի թիթեղը՝ 22,300 լ. ու, 95 օքթան ստանց կապարի պէնպիսի՝ 21,500 լ. ու, 92 օքթան ստանց կապարի պէնպիսի՝ 21,100 լ. ու, 90 օքթան ստանց կապարի պէնպիսի՝ 20,100 լ. ու, կապը՝ 9,800 լ. ու, մալուրը՝ 9,700 լ. ու, տիպը օյլը՝ 10,000 լ. ու, իսկ ֆիուլ օյլը՝ 253 տոյաք:

LOԽԻ «ԿԱՐՍ»
ՄԱՍՆԱՃԻՒՂ

ԵՐԹԱԿԱՆ Բ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 25 Փետրուար 2003ին առաւօտեան ժամը 9:30ին, «Ազատամարտ» ակումբի «Չուխատարեան» սրահին մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բարձր հովանաւորութեամբ՝

ԱՄԵՆԱՊԱՏԻԵ ԵՒ ԳԵՐԵՐՁԱՆԻԿ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.Ի

(Կաթողիկոս Պատրիարք Կաթողիկէ Եայոց Տանն Կիլիկիոյ)

ՎԱՐԳԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՆԻԵՍ

Կազմակերպութեամբ՝

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ

ԺՈՂՈՎՐԴԱ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Բանախօսութեամբ՝

ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ

Չորեքշաբթի, 26 Փետրուար 2003, երկուշաբթի ժամը 8:30ին, Ե.Կ.Ս.Ի «Յովհաննէս Պողոսեան» բառերաբարհ, Պուրճ Համուտ:

ՀՐԱԻՐ

ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 20ԱՄԵՆԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՎԱՐՓԱՐԱՆԸ

Կը ներկայացնէ

Եայոց Արուեստագիտուհի ԱԳՆԵՍ ԱՒԱԳԵԱՆԻ

Նկարչական ցուցահանդէսը

Ընդամաւորութեամբ Եայոստանի դեսպան

ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Մասնակցութեամբ՝

Երգիծանկարիչ ՓԻԵՌ ՍԱՏԵԻ

Բացումը՝ Ուրբաթ, 28 Փետրուար 2003, երկուշաբթի ժամը 8:00ին, Մետրուար Արուեստից վարժարանի ցուցասրահին մէջ:

Ցուցահանդէսը բաց է եւ 2 Մարտին, առաւօտեան ժամը 11:00էն երկուշաբթի ժամը 7:00:

ՀՐԱԻՐ

ՀԱՐԱՍԵԿԱՆ ՀՐԱԻՐ

ՏԻԿԻՆ ՉՈՒԱՐԹ ԵՍՍԻԵԱՆ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԵՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն իրենց բարեկամներն ու ազգակամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր:

ՎԱՐԱՍԻ ԵՒ ԸՈՒՐԻԻ

Ս. պսակի խորհուրդին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 23 Փետրուար 2003, երկուշաբթի ժամը 7:00ին, Աճաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

ԿՆԵԱՐԱՅՐ՝ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ԵՍՍԻԵԱՆ
ԿՆԵԱՍԱՅՐ՝ ՕՐ. ՍԱՐԱԼ ՊՈՅԱՃԵԱՆ

●Ներկայս ընդունիլ իրեն անձնակազմ հրաւիր
●Զնորհաւորութիւն՝ տեղւոյն վրայ
●Ընդունելութիւն՝ ժամադրութեամբ
e-mail: vahram_houry@hotmail.com

ՀԱՐՈՆ – ՄԻՅՆԱ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ...

Շարունակուած Ա. ԷջԵՃ

որուն կը մասնակցին կրօնական ծայրայեղական կրօնակցութիւններ: Շարունի հետ հանդիպուած մին աւարտին, Լափիտ ըսաւ, որ սկզբնական համաձայնութիւն մը գոյացած է, որուն մանրամասնութիւնները սակայն տակաւին չեն վերջնականացած: Շինուի 15 պիտու ունի Քննէթի մէջ:

Մինչ այդ, պաղեստինեան շրջաններուն մէջ ըրախմբներն ու գործողութիւնները կը շարունակուին: Կազմակցութիւնները կը շարունակեն սպառնալիքներ արտասանել: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ պաղեստինցի մը

սպաննուեցաւ, երբ կը փորձէր թափանցել Տուրքիստանի սահմանը: Կազմակցութիւնը Քանի մը ժամ ետք սպաննուեցաւ երկրորդ պաղեստինցի մը էրէզի անցարգելի վրայ՝ Իսրայէլի եւ Կազմակցութիւնը Իսրայէլեան աղբիւրներուն համաձայն, պաղեստինցիներու ձեռնարկ մը կը կատարուի: Իսրայէլեան զինուորը յարձակած էր անցարգելի հակող գիւղերու վրայ: Կազմակցութիւնը վերաբերեցաւ նաեւ պաղեստինեան ապահովութեան ուժերու անդամ մը, յայտնեցին պաղեստինեան աղբիւրներ: Իսկ Այսրըրզանա-

ԱԶԳ

Ազգային առաջնորդարանը կը յայտարարէ, թէ Ֆըրմ Շրպպէի եւ Պուրճ Համուտի Ազգային գերագահութեան մէջ տրամադրելի են շատ սահմանափակ թիւով դաժմբարանի նոր հողաշէրտեր: Ինչպէս նաեւ, կ'ուզեն յիշեցնել, թէ Պուրճ Համուտի Ազգային գերագահութեան մէջ գտնուող արդիական ռոմով կառուցուած դարակ - դաժմբարանները վաճառք կը շարունակուի: Ան այդ, բոլոր այն ազգայինները, որոնք հետաքրքրուած են, բարեհաճին ներկայանալ Ազգային առաջնորդարան, Պուրճ Համուտ, կամ հեռաձայնել 01 / 258300 թիւին:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԱՀԱԶԳ

Տիկին Լուսին Քէօյլեան եւ գաւազը՝ Պեքմ Տէր եւ տիկին Սամուէլ եւ Լենա Թօփալեան եւ գաւազուներ

Տէր եւ տիկին Արա եւ Սիլվա Քէօյլեան եւ գաւազուներ Քէօյլեան ընտանիք

Ճամբարեան ընտանիք

Ճինպաշեան ընտանիք

Պատուեան ընտանիք

Թօփալեան ընտանիք

Արսլանեան ընտանիք

Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, քեռայրին եւ հարազատին՝

(ԱՅՓ)

ԲԱՆԱՍՏՈՐՈՒՄԸ

Տեր եւ տիկին Արթուր եւ Սիլվա Քիւրքճեան բախտաւորուած են մանչ գաւազով մը՝

ԸՐԱՆԴ

21 Փետրուար 2003

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Իր կնոջ՝ Սեդա Ճըրճըրեանի մահուան Ա. տարեկին առիթով, տիար Կարապի Ճըրճըրեանը կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները:

●Ներկայս ընդունիլ իրեն մահապղ:

●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Կարապետ Գոնիալեանի բնակարանը, Անթիլիաս, «Նասիոնալ» շէնք, 10րդ յարկ:

●Հանգուցեալին հոգւոյն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

●Ներկայս ընդունիլ իրեն մահապղ:

●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ժուլիէ, «Սալիպա» շէնք, Բ. յարկ, Շաբաթ 22, Կիրակի 23 եւ Երկուշաբթի 24 Փետրուարին:

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԳԱՎՈՒԹԵԱՆ ՖՈՆԾԻՆ

●Իր կնոջ՝ Սեդա Ճըրճըրեանի մահուան Ա. տարեկին առիթով, Տիար Կարապի Ճըրճըրեան

50,000 լ. ո.

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆԾԻՆ

●Իր կնոջ՝ Սեդա Ճըրճըրեանի մահուան Ա. տարեկին առիթով, Տիար Կարապի Ճըրճըրեան

50,000 լ. ո.

ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Պետրոս եւ Լուսին Քէօյլեան եւ գաւազուներ՝ Քրիստինէ

Տիար Բաֆֆի Գազանճեան

Տէր եւ տիկին Գէորգ եւ Լուսին Շաքեան եւ գաւազուներ՝ Նոյեմի եւ Միհրան

Տէր եւ տիկին Մորիս եւ Պերճուհի Պողոսեան եւ գաւազուներ՝ Յակոբ, Բասթալ եւ Նաթալի

Տէր եւ տիկին Անթուան եւ Մարիամ Նամէ եւ գաւազուներ՝ Թալին, էլիթ եւ Սերժ

Գազանճեան ընտանիք

Տեմիրճեան ընտանիք

Մոպերկ ընտանիք

Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մեծ մօր եւ հարազատին՝

ԱՆԺԵԼ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՏԵՄԻՐՃԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ, Շաբաթ, 8 Փետրուար 2003ին, Սթոքհոլմի մէջ, Շուէտ:

Ցուղարկուելու ժամանակ արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 24 Փետրուարին, Սթոքհոլմի մէջ:

●Ներկայս ընդունիլ իրեն մահապղ:

●Ցաւակցութիւնները կ'ընդունուին տեր եւ տիկին Մորիս եւ Պերճուհի Պողոսեաններուն բնակարանը, Տրոսուսէ, «Սլա» փողոց:

●Հանգուցեալին հոգւոյն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար, Նոր Մարտի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՄԱՀԱԶԳ

Տիար Կարապետ Գոնիալեան եւ գաւազուներ

Տէր եւ տիկին Լուիզիլ Գոնաօղլանեան եւ գաւազուներ

Տէր եւ տիկին Միլէլ Մաքրիս եւ գաւազուներ

Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՅՈՎԱԵՓ ԳՈՆԻԱԼԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 14 Փետրուար 2003ին, Լոս Անճելէսի մէջ:

Ցուղարկուելու ժամանակ արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 19 Փետրուար 2003ին, Լոս Անճելէսի մէջ:

●Ներկայս ընդունիլ իրեն մահապղ:

●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Կարապետ Գոնիալեանի բնակարանը, Անթիլիաս, «Նասիոնալ» շէնք, 10րդ յարկ:

●Հանգուցեալին հոգւոյն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՀՈՂԵՐՈՒ ԳՐԱՒՈՒՄԸ

Հինգշաբթի, 20 Փետրուարին ժրնեի միջեկեղեցական կայմաւորման կեդրոնին մէջ տեղի ունեցաւ յատուկ հանդիսութիւն մը՝ նուիրած պաղեստինեան գրաւեալ հողերու մէջ եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին կողմէ տարուած աշխատանքներուն:

Արդարեւ, Ե. Հ. խորհուրդը իր «10ամեայ պայքար բռնութեան դէմ» ծրագիրին շրջագիծէն ներս 2002 տարին հոչակած էր պաղեստինցիներուն եւ արդարութեան ու խաղաղութեան հետ ըլլալու տարի: Ամբողջ տարուան ընթացքին յատուկ ծրագիրներու, աշխատանքներու ու կամաւորներու ճամբով հսկայ աշխատանք կատարուեցաւ Ե. Հ. խ.ի կողմէ: Այս ծրագիրին պատասխանատուն էր՝ Կիպրոսի մեր համայնքի անդամներէն Ե. Հ. խ.ի միջազգային հարցերու գրասենեակի աշխատակից Սալբի Էսքիճեան:

Հանդիսութեան ներկայ եղան խորհուրդին Գործադիր Վարչութեան անդամներու կողքին, Կանաչան կայմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր: Հանդիսութեան սկիզբը ներկայաներուն ցուցադրուեցաւ վաւերագրական ֆիլմ մը՝ պաղեստինեան հողերուն վրայ ապրող ժողովուրդին դժուարութիւններուն մասին: Ապա յաջորդաբար խօսք առին Ե. Հ. խ.ի ընդհանուր քարտուղարը եւ ամբողջ տարին պաղեստինցիներուն օգտակար դարձած շուէտացի մը եւ դանիացի մը:

Հանդիսութեան փակման խօսքը կատարեց Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Ե. Հ. խ.ի ատենապետի իր հանգամանքով: Վեհափառ հայրապետը նախ գնահատեց բոլոր անոնք, որոնք նւիրած են այլ միջոցներով օգտակար հանդիսացած էին յիշեալ ծրագրի իրագործման: Ապա վեհափառ հայրապետը իր եզրափակիչ խօսքը ամփոփեց երեք կէտերու մէջ.

- Եկեղեցիներու կողմէ հոչակուած «10ամեայ պայքար բռնութեան դէմ» ծրագիրին նպատակն է արդարութեան եւ խաղաղութեան համար աշխատիլ: Բռնութեան պատճառը անարդարութիւնն է ու կարելի չէ մնայուն խաղաղութիւն հաստատել, երբ անարդարութիւն գոյութիւն ունի:

- Բռնագրաւում եւ բռնութիւն իրարու հետ սերտօրէն առնչուած են: Բռնութիւնը արդիւնք է բռնագրաւման: Պետք է վերջ տալ պաղեստինեան հողերու բռնագրաւման: Այս է դէպի

Շաբ.ը Էջ 10

ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԸԱՍԱԳՈՒՄԱՐԸ ԵԶՐԱՓԱԿԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Լիբանանահայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութեան եւ Հայկապեան համալսարանի ընկերային գիտութիւններու բաժանմունքին կայմակերպած «Ընկերային Ծառայութեան աշխատանք» ներկայիս մեր դիմագրաւած հարցերը» համագումարը, երէկ շաբուանակեց եւ եզրափակեց իր աշխատանքները:

Առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ յետմիջօրէի ժամը 4:00 համագումարը արժարժեց ընկերային Ծառայողները յուշող շարք մը հարցեր: Առաջին դասախօսութեան նիւթն էր ընկերային Ծառայողին կողմէ օգտագործուելիք մասնագիտական միջոցառումները, որ ֆրանսերէնով ներկայացուցաւ Ֆրանսիս վրդ. Լէտիսի կողմէ: Ան ներկայացուց Կանաչան տեսակի բռնութիւններու ենթակուած, ընկերային հարցեր դիմագրաւող, ինչպէս նաեւ մոլորութիւններու տէր անհատներուն հարցերուն լուծումներ գտնելու ձգտող ընկերային Ծառայողներուն աշխատանքային թեքնիքները:

Երկրորդ դասախօսութեան նիւթն էր «Սթրէս մէնէյճմընթ», զոր ներկայացուց տոքթ. Անթուան Մաստ: Բացատրելի էր զերձնշումները թեան բնոյթը, անոր տուն տուող ազդեցութիւնը, ախտանշանները, բնախօսական, մտային, զգացական եւ վարուելակերպի մակարդակներու վրայ զերձնշումներուն տառապող անհատներուն մօտ արձանագրուող փոփոխութիւնները եւ երկար ժամանակի վրայ մնացող հետեւանքները, մանրամասնութեամբ բացատրեց զերձնշումները նուազեցնելու միջոցառումները: Ան շեշտեց, որ զերձնշումները կը սկսի ենթակային մօտ եւ կը լուծուի անհատական գետնի վրայ, բնականաբար նաեւ շրջապատին աշակցութեամբ: Ճաշի դարպարէն ետք տեղի ունեցաւ համագումարին վերջին բաժինը, որ կ'արժարժէր ընկերային պարագաներու հետ աշխատելու կերպեր: Աշխատանքային հանդիպումի ձեւով ընթացած այս բաժինով իբրեւ օրինակ քննարկուեցան անհատական եւ ընկերային պարագաներ: Այս բաժինը յաջորդաբար ներկայացուցին քոյր նուսա Տաքաշ եւ Ֆրիտա Ապա:

Երկու օրերու վրայ երկարող այս համագումարը շինիչ նախաձեռնութիւն մըն էր ի մի բերելու լիբանանահայ ընկերային Ծառայողները եւ արժարժելու Կանոնը յուշող հարցերը:

ԱՅՍՕՐ՝ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԵՆ

Այսօր՝ Շաբաթ, 22 Փետրուար, կէսօրուան ժամը 12:00ից, «Վանայ Չայն»-ը ունկնդրեցեք Գ. Յ. Գ. Լիբանանի Գայ Դատի Մարմինին պատրաստած «Գայ Դատը այսօր» յայտագիրը:

- Շաբթուան մտածումը
- Լուրեր՝ Գայ Դատի մասին
- Պատմական ակնարկ անցեալէն այսօր
- Գարգարոյց ընկ. Սկրտիչ Սկրտիչեանի հետ

Յայտագիրին կրկնութիւնը Կիրակի կէսօրուան ժամը 12:00ից:

ԵՐՁԱՆԿԱՅԻՇԱՍԱԿ ԳԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ ԳՈԳԵՅԱՆԳԻՍ ԱՆԹԻԼԻԱՍԻՄԷՉ

Յառաջիկայ Կիրակի, 23 Փետրուարին յաւարտ Ա. պատարագի, Անթիլիասի մայրավանքի «Չարեհեան» յուշարձան - դամբարանին մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ Կիլիկեան Ա. Աթոռի Երանաշնորհ հայրապետներուն՝ Տ. Տ. ՍԱՇԱԿ Բ., Տ. Տ. ԲԱՐԳԵՆ Ա., Տ. Տ. ՊԵՏՐՈՍ Ա., Տ. Տ. ԳԱՐԵԳԻ Ա., Տ. Տ. ՉԱՐԵՆ Ա., Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա. ԵՒ Տ. Տ. ԳԱՐԵԳԻ Բ. կաթողիկոսներուն եւ ննջեցեալ միաբան հայրերու հոգիներուն համար:

Եկեղեցական արարողութեանց պիտի մասնակցուի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կը հրաւիրուի մեր ժողովուրդի զաւակները՝ իրենց յարգանքը ընծայելու երջանկայիշատակ հայրապետներուն եւ բարեխիշատակ միաբաններուն:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Arabic header with logos: البيق, الالولاء, الخراج المسوي, السفر, الزيار, المستقبل, الزكوة

Տեղական մամուլը երէկուան թիւին մէջ անդարդարձած է իրաքեան հետպիտեմէ մօտեցող պատերազմին եւ պաղեստինեան տագնապին: Տեղական լուրերու կարգին թերթերը լուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդին ժողովը եւ փոթորիկը ու տեղատարափ անձրեւները, որոնք աւերներ գործեցին Կանաչան շրջաններու մէջ:

«Մուսթաքալ» օրաթերթը գրած է, թէ Սաւտամը սպառնալից էր իր նախարարական շտապ օգնութեան յանձնախումբ յառաջացաւ: Աքքարը եւ Պեքաան ողողուեցան:

Ըստ «Մաֆիթ»-ի, նախարարաց խորհուրդին ժողովը անցաւ հանդարտ մթնոլորտի մէջ՝ քննարկելով քաղաքական եւ ընկերային հարցեր:

«Մատինա»-ի թղթաւ, ծրարը կ'ամբողջանայ երկու շաբթուան ընթացքին: «Նահար» օրաթերթին համար խորհուրդը յառաջացուց շտապ օգնութեան յանձնախումբ մը եւ որոշեց հատուցումներ տալ վնասներ կրած քաղաքացիներուն:

«Էիֆահ Արապի» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ նախարարաց խորհուրդը կը շրջանցէ «Էիֆահ»-ի պարտիքները: Զօր. Լահուտ կը հաստատէ, թէ «Էիֆահ»-ի հետ միասնականութիւնը կը շարունակուի: Լիթանին կ'ողողէ Պար Էլիսարը եւ կը փակէ միջազգային ճամբան:

«Անուար» գրած է, թէ ողողումները կը շրջափակեն հազարաւոր քաղաքացիներ Պեքաայի եւ Աքքարի մէջ:

Ըստ «Պայքար»-ի, նախագահ Լահուտ շեշտեց, թէ մէկ շաբթուան ընթացքին պէտք է ձեռնարկուի Պատտաուիի ելեկտրականութեան խնդիրին առնչութիւն ունեցող պատասխանատուները եւ Կանոնը պատիժի ենթարկել: Թերթին համաձայն, նախագահ Լահուտ նախարարաց խորհուրդին ժողովին շեշտեց, թէ «Էիֆահ»-ի հետ տագնապը վերջ գտած է:

Իրաքեան հարցին մասին «Տիար» գրած է, թէ Էրտողան նշած է, թէ անբիկացիներուն դիմաց թուրքի յօրակալները բաց պիտի չըլլան նախարարութեան գրած է, թէ Պուշ յայտարարած է. «Սաւտամ կը վատնէ վերջին առիթը եւ վերջին խօսքը մերն է»:

«Մաֆիթ»-ի համաձայն, Սուրիոյ նախագահ Ասատ յայտարարեց, թէ հարկ չկայ արաբական վեհաժողովի մը, եթէ անիկա պատերազմը ծածկելու համար է:

«Պայքար» նշած է, թէ Ուաշինկթըն կը սպառնայ թուրքիոյ եւ կը յայտարարէ, թէ Սաւտամը սպառնալից էր իր նախարարական շտապ օգնութեան յանձնախումբը:

«Նահար»-ի համաձայն, Միացեալ Նահանգներ թուրքիոյ փոխարէն աշխարհին խորհրդանիշն է: Թերթը նշած է, թէ Իսրայէլ կը պատրաստուի Կանաչան գրաւելու:

ԴԱՍԱՆՕՍԱԿԱՆ Գ. ԶԵՆԱՐԿ «ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ» Կազմակերպութեամբ՝ ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ Դասախօսուի՜ ԱՐՓԻ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ Տեղի կ'ունենայ Գործըջաբթի, 26 Փետրուար 2003ին, առաւօտեան ժամը 10:00ից, Ազգ. Արգարեան վարժարանի սրահին մէջ: ԸՐԱԿԵՐ

Հայ Կաթողիկէ ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան Բացում Գ. երկամսեակի Անգլերէն եւ Օտար Լեզուներ Համակարգիչ Դիմայարդարում սկիզբը՝ 24 Փետրուար, 2003 Համակարգիչի լրի դասընթացը՝ ամսական միայն 25 հազար Լ.ո. 260504 www.mesrobian.com

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՔՈՉԱՐԵԱՆԸ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ԺՈՂՈՎՐԳԻ ՀԱՄՈՉԻՉ ՔՈՒԷԻՆ»

Շ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ՇՐԱՄԱՐԱՐԵԱՆԻ՝ ՓԵՏՐՈՒՄԻ 20Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ «ՀԱՅԼՈՒՐԻՑ ԴՈՒՐԱ» ԾՐԱԳՐԻՆ

ՀԱՐՑՈՒՄ.- Այսօր արդեն պարզ է, որ Գաղափարական ընտրությունները կ'ունենան երկրորդ փուլ: Ի՞նչ պետք անցան ընտրությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այս ընտրություններն անհախադէպ էին իրենց կազմակերպության մեջ: Գաղափարական ընտրությունները կ'ունենան երկրորդ փուլ: Ի՞նչ պետք անցան ընտրությունները:



անկախանք քայլեր ձեռնարկելու նոր քաղաքականություն էր հռչակում: Այս ընտրությունները իսկապես տարբերվում էին Հայաստանում կայացած միև ընտրություններից, անհախադէպ էին ժողովրդի աքրի մասնակցությունը: Պէտք է շնորհակալություն ասենք այն 700 հազարից ավելի քաղաքացիներին, որոնք, լսելով նաև մեր կոչերը, իրենց վստահության քուլն տուեցին Ռոպերթ Քոչարեանին: Այս ընտրությունները բացառիկ էին նաև մեր երկրում մի նոր որակի ժողովրդավարության հաստատումը, ելեք այսօր ուրախ եմ, որ այսօր ուրախ եմ այսօրուհան շատ հաստատում, որ պայտպանել եմ մի թեկնածուի, որը, ստանալով 49 տոկոսից ավելի վստահության քուլններ, այնուամենայնիւ, երկրորդ փուլ է տանում ընտրությունները, քանի որ նա պետք ունի իր ժողովրդի համոզվելու և վստահության քուլններ: Համարում եմ, որ այս ընտրությունները մեզ պարագայական խախտումները տեղի ունեցան նաև գաղափարական կողմից, որոնց մեծ մասնակցությունը գտնուում են մրցակից թիվում: Այն խախտումները, որ գրանցվել են այս ընտրություններում, ի չիք են դառնում այն ղեկավարները, որոնք համեմատում ենք այլ ընտրությունների հետ: Եղել են խախտումներ, սակայն դրանք չէին կարող խնդրոյ առարկայ դարձնել ընտրությունների արդյունքները:

Ես նույնի պետք է ասեմ, որ մի նոր որակ է ստեղծուել Հայաստանում, եւ ժողովուրդը սկսում է արժեքներ իր մասնակցությունը: Ես նույնի պետք է ասեմ, որ մի նոր որակ է ստեղծուել Հայաստանում, եւ ժողովուրդը սկսում է արժեքներ իր մասնակցությունը:

Ես նույնի պետք է ասեմ, որ մի նոր որակ է ստեղծուել Հայաստանում, եւ ժողովուրդը սկսում է արժեքներ իր մասնակցությունը:

նրանք վերանային իրենց մտեցումները, եւ նրան, ում կը տայ ժողովուրդը իր քուլն, մենք պատրաստ ենք ողջունելու, մենք խնդիր չունենք: Բայց թող չփորձեն վախեցնել եւ սպառնալ ունենալ մէկին:

Մենք միշտ պայքարել ենք արդարության համար ու երբեք իշխանություն համար սկզբունքներ չենք զիջել եւ մտադիր էլ չենք: Պէտք է գիտակցել, որ կայ տարր, որը մեծ դերակատար է եղել թալանի մէջ, մասնագէտ ընտրությունները կեղծելու մէջ, եւ այդ տարրն այսօր փորձում է յաւերժացնել իր թալանած ու խնդրոյ առարկայ դարձնել մեր երկրի հեղինակությունը, եւ կ'ընդունուի մեր կողմից: Չգուցեմ, որ քիչ տարբերություններ կարող էր շահարկուել ու խնդրոյ առարկայ դարձնել մեր երկրի հեղինակությունը, եւ կ'ընդունուի մեր կողմից: Չգուցեմ, որ քիչ տարբերություններ կարող էր շահարկուել ու խնդրոյ առարկայ դարձնել մեր երկրի հեղինակությունը, եւ կ'ընդունուի մեր կողմից: Չգուցեմ, որ քիչ տարբերություններ կարող էր շահարկուել ու խնդրոյ առարկայ դարձնել մեր երկրի հեղինակությունը, եւ կ'ընդունուի մեր կողմից:

Ռոպերթ Քոչարեանը այն մարդն է, ով ինքն ղեկավարում այս երկիրը, ոչ թէ, ինչպէս այլ պարագայում, այն դեպքերում ուրիշները:

Մենք ունենք թեկնածու, որը գիտի, թէ ինչ պետք է անել, եւ ունի արդէն փորձ՝ երկիրը զարգացման նոր փուլով տանելու համար: Եւ նա չի փորձել իշխանություն օգտագործել ընտրությունների արդյունքը խեղաթիւրելու համար:

Ես վստահ եմ, որ Ռոպերթ Քոչարեանին ստարող մարդկանց շարքերը կ'աւելանան եւ կը համախմբուեն նախագահի շուրջը, ու մենք կը յաղթենք, եւ այդ յաղթանակը ոչ մէկի ոչնչացում չի նշանակում: Ես ակնկալում եմ, որ երկրորդ հանդուրանում միասնականութեան շնորհիւ յաղթանակելու ենք:

Ես վստահ եմ, որ Ռոպերթ Քոչարեանին ստարող մարդկանց շարքերը կ'աւելանան եւ կը համախմբուեն նախագահի շուրջը, ու մենք կը յաղթենք, եւ այդ յաղթանակը ոչ մէկի ոչնչացում չի նշանակում: Ես ակնկալում եմ, որ երկրորդ հանդուրանում միասնականութեան շնորհիւ յաղթանակելու ենք:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՒՈՒՄՆԵՐԻ ԹԻԻԵՐԸ • ԱԶԳԱԿ-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւել թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՆՈՐ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ»

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԼՕԽԻ ԾՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ)

Երկար տարիներու բազմաթիւ շնորհակալութիւններով արդէն Հիւրանահայ Օգնութեան ինչի Շրջանային վարչութիւնը աւարտեց Հրատարակական մարզը ընդգրկող մշակութային ու ազգագրական ոլորտը հարստացնող աշխատանք մը, որուն նախաձեռնած էր ան աւելի քան տասնամեակ մը առաջ: Հեղինակ (Հեղուշ) Փափագեանի «Հայկական տարազ» պատկերազարդ հատորն է, որ կը վերաբերի պատմական թէ ներկայ Հայաստանի դաւաճանքը ազգային ու տոհմիկ տարազներու, անոնց պատմական տուեալներուն, ձեւերն ու օգտագործման իմաստին, իւրաքանչիւր գաւառի յատկանշական ձեւաւորումներով, գոյներով, գարգերով ու նախշերով մանրամասնուած:

Նախ համառօտ ակնարկ մը այս արժէքաւոր աշխատասիրութեան մասին: 1970ական թուականներու սկիզբն էր, երբ այցելեցինք Հեղուշ Փափագեանի տունը՝ զրոյց մը ունենալու հետք, իր ազգային և մտաւորական կեանքին վերաբար մը իմանալու: Տրուած ըլլալով, որ ան երեւանցի էր եւ սպարէզով բժշկուէի, իր վաղ երիտասարդութեան տարիներուն ճակատագիրը զինք ղէմ յանդիման բերած էր Հայ ժողովուրդի դժբախտ ու ճակատագրական պայմաններուն: 1918-1920 թուականներուն կ'ակնարկենք: Մերութեան տարիքին թեւակոխած, ինքնամփոփ կին մըն էր ան արդէն, երբ այցելեցինք իրեն սակայն միշտ միեւնոյն ընթացակարգը, օրուան անցուցումը տեղեկ աստիճանով կ'ընէր:

Իր անցեալին մասին շատ խօսեցաւ, որովհետեւ «անցած բաներ» էին, ու չէր ուզեր, որ ինքնագովութեան նման գրոյց մը ծայր տար: Անմիջապէս անցաւ հարց մը ծանօթացման, որ իրեն համար շատ սրտադրաւ ու կարեւոր էր: Բերաւ ձեռագիրներու մեծ ու հաստ տետրակ մը ու ցոյց տուաւ բովանդակութիւնը: Էջերուն մէջ ձեռագիր բացատրութիւններ, հայկական տարազներու ուրուագիծներով, պատկերներով, զորս ինք պատրաստած էր: Կ'ուզեմ տպագրութեան յանձնել այս գործը: Դիմեցի Մեծի Տանի Կիլիկիոյ ինտն Ա. կաթողիկոսին: Կ'ուզեմ տպագրութեան յանձնել այս գործը: Դիմեցի Մեծի Տանի Կիլիկիոյ ինտն Ա. կաթողիկոսին: Կ'ուզեմ տպագրութեան յանձնել այս գործը: Դիմեցի Մեծի Տանի Կիլիկիոյ ինտն Ա. կաթողիկոսին:

Իր խօսքերէն եւ յաւելելով բացատրութիւններէն սկսելով, թէ իր սրտին մօտ գործ մըն է պատրաստուած «Հայկական տարազ» ազգագրական, նաեւ՝ պատմագրական այգում-հատորը: Ուշագրութեամբ հետեւեցայ իր բացատրութիւններուն: Էջ առ էջ բանալով յայտնեց. այս վառայ տարազն է, սա՛ իրզուէի, միւսը՝ Տիգրանակերտի, իսկ այս ալ Երեւանի: Շարք երկար էր. կը գործնային այնքան մանրակրկիտ ուսումնասիրութեան, հետեւողական աշխատանքին եւ ջրմ սիրով արդիւնք եղած հայկական տարազներու նմուշներուն, որոնց մոտեւոր մանրուշտ հարգանքով պիտի չկարուէինք ներկայիս, բայց կը զարդի երբեմնի յեղափոխական, ազգային գործիչ եւ բժշկուէի այս տիկնոջ տաղանակը՝ Հայ մշակութիւն պատմաբան մը փոխանցելու նոր սերունդին, անոր ցոյց տալու իր արժանները, թէ ուրիշ՝ եկած է ինք: Լիբանանի պատերազմը արդէն վրայ հասած էր: Լիբանանահայ գաղութը իր ըլլոր խաւերով անդամալուծուած, կաշկանդուած, գլուխը պահուելու տեղ մը կը փնտռէր միայն: Հեղուշ Փափագեանն ալ տեղահան եղաւ նշան Փալանճեան ձեռնարանի դիմացը գտնուող իր բնակարանէն: Հիւանդ էր ու ծերացած: Լիբանանահայ Օգնութեան ինչի գինք պատասպարեց յարմար հիւանդանոցի մը մէջ: Տարագներու ձեռագիրը փրկած էր ուսմբերէն ու յանձնած՝ ԼՕՍԻ կողմէն Շրջանային վարչութեան, որ խոստացաւ անպայման տպել «Հայկական տարազ» հատորը:

Արդէն մօտաւորապէս 30 տարիներ անցած են այդ թուականէն: Հեղուշ Փափագեան մահացաւ առանց տեսնելու իր ստեղծագործութեան ծնունդը, բայց ԼՕՍԻ Շրջանային վարչութիւնը վերջին երկու տարիներուն հակեցաւ այս «թղթածրարին» վրայ ու յատուկ յանձնախումբ մը կազմելով՝ գործը յանձնեց Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկին: Այս պատկանելի հիմնարկին փոխ նախագահ՝ Սարգիս Յարութիւնեան, իր շուրջ ունենալով խմբագրական կազմի անդամներ՝ Արամ Քալանթարեանն ու Սիւթիանա Պօղոսեանը, յաջողեցան լոյս ընծայել այս արժէքաւոր աշխատասիրութիւնը:

Իսկ մեկենասը. ՀՕՄը ստանձնած է տպագրութեան ծախսերը: Այդ մասին եւ հատորին յաջողութեան պատկերներուն մասին ներածական յօդուած մը ստորագրած է ԼՕՍԻ Շրջանային վարչութեան ատենակազմուէի Սեդա Ստեփան: Այս առիթով շնորհակալիք մը յղած է զարմեալ ԼՕՍԻ Շրջանային վարչութիւնը այն անձերուն, որոնք օգտակար եղած են «Հայկական տարազ» գեղատիպ, նկարազարդ հատորին լոյս ընծայման:

311 տարագներու նմուշներ, յարակից բացատրութիւններով, պարփակուած են 146 մեծադիր էջերու մէջ: Հայ մշակութիւն գանձարանին մէջ ներմուծուած գնահատելի, ողջունելի ներդրում մը արդարեւ, որ պիտի լուսաւորէ հոգին հանգուցեալ մեր բազմապատակ մտաւորական ընկերուէի Հեղուշ Փափագեանի, կ'ընէ՝ ազգային ղէմը վահան Փափագեանի (Կոմս): Իր անունով ԼՕՍԻ ընկերակցութեան մասնաճիւղ մը Ռատուտայի մէջ:

Բոլորին վարձքը կատար. ու հիմա տեղին է օգտագործել «Լաւ է ուշ, քան՝ երբեք» իմաստութիւնը: Կր հուստանք, որ արձէքները չեն կորսուիր եւ սեփականութիւնը կը դառնան ժողովուրդին ու մարդկութեան:

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԱՆՈՒՆ ՄԸ ԸՆԿԵՐ ՄԵԼԻՔ ՔԵԶԷՊԱՇԵԱՆ



Մեր կուսակցութեան անունին երկրորդ անգամը՝ Յեղափոխական, արդէն լաւագոյնս կ'ապացուցէ մեր իսկական դիմագիծն ու մասնաւոր մեր հայեցակէտը, մեր համոզումները քաղաքական թէ ազգային գետնի վրայ հաւասարապէս: Իսկ այդ անգամին գործնապէս տէրը ըլլալու փաստը տուած ենք ամբողջ մեր կեանքին տեւողութեան՝ 112 տարի շարունակ ու պիտի տանք ընդմիշտ, այնքան ատեն որ տակաւին ունինք ընդհարուած իրաւունքներ:

Աշխարհասփիւռ հայութեան մէջ ամուր խարսխուած մեր կուսակցութիւնը միշտ գործեց ի խնդիր համազգային շահերու, ի խնդիր ազատ ու անկախ Հայրենիք մը, իսկ Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ գուգահեռաբար գործեց յանուն տուեալ երկրին օրէնքներուն ու պետականութեան, հաւատարիմ ծառայելով անոր բարգաւաճման ու վերելքին համար: Եւ այս բոլորին համար անշուշտ պէտք էր, պէտք է այսօր ու պէտք պիտի ըլլայ միշտ հաւատաւոր ընկերներու, յեղափոխական մարտական անաղով ու նաեւ փորձառութեամբ թրծուած. գլխադիր Գործին հաւատացող ընկերներու, որոնք ծառայած են ու կը ծառայեն տակաւին անսակարկ, ամենայն համոզումով ու վճռականութեամբ: Որովհետեւ յեղափոխական խառնուածքի ու յեղափոխութեան հաւատացող մարդը, գաղափարապաշտ մարդը չի կրնար անտարբեր մնալ իր ուխտին, երգումին դիմաց, իսկ երգումնարարութ մարդը արդէն ի սկզբանէ տեղ չի կրնար ունենալ մեր մէջ:

Ահա այս փաղանքին կը պատկանէր Նոր Միւշրջանի տիպար բնակիչներէն, Ազիրեան ակումբի ընկերներէն՝ Մելիք Քեչէպաշեանը, բոլորին սիրելի, բոլորին ծանօթ ու բոլորին համար յարգելի ընկեր Մելիք: Յարգելի՛ իր գործով, որուն մասին ճիշդ պիտի չըլլայ խօսիլ ու գրել, որովհետեւ ինք այդպէս համոզուած էր՝ գործել մուլթին մէջ, առանց անելորդ երեւոյթներու, ձեւաւոր շարժումներու: Կեանքի մէջ կան երեւոյթներ, որոնց դիմաց պէտք է լուռ անցնիլ, որպէսզի ավելի մեծ մնայ արժէքը անոնց: Լուռ կ'անցնինք, բայց մեր հոգիներուն մէջ միշտ աւելի պայծառ կը մնայ յիշատակը այդ լուռ գործող մեր անմահ ընկերներուն, որովհետեւ միայն մենք դիտեմք անոնց գործին անսահման տարողութիւնը, ինչպէս նաեւ պատերազմի տարիներուն՝ մեր ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան համար իրենց կեանքի գնով նուիրուած ընկերներուն գոհաբերութեան պատկանելի արժէքը:

Ընկեր Մելիքը արդէն քառասուն օրէ ի վեր չկայ մեր մէջ, բայց կը մնայ անոր վաստակը, կ'ան անոր մատահետեւը մեր լուռ գործերուն մէջ: Այդ հետեւերը կը շարունակեն առաջնորդել մեզ, միշտ յեղափոխական ու մարտական մեր աւանդին նկատմամբ օրէ օր աւելի ամրապնդելով մեր համոզումն ու խոր յարգանքը:

Ննջէ խաղաղ ու խղճի ամենայն հանգստութեամբ, որովհետեւ անսակարկ ծառայեցիր քու այնքան պաշտած ժողովուրդիդ՝ պայտած կուսակցութեանդ ճամբով, միշտ յեղափոխական կուռ ու անխախտ համոզումով:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅԵՂԱՅՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՍՈՒԹԻՒՆ - ԶՈՅՑ (ԵՐԻՏԱՍԱՐԿԵՐՈՒ ԸՍԱՐ) Սիւք՝ «ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԸՍԱՅԱՆՑ» (THE CHURCH & THE INTERNET) Սիւքը կը ներկայացնէ՝ ՀՈՒՇ.Տ. ՄԱՇՏՈՅ ՎՐԳ. ԶՈՊԱՆԵԱՆ Տեղի կ'ունենայ Շաբաթ, 22 Փետրուար 2003 թ. երեկոյան ժամը ճիշդ 8:00Իճ, միութեան աղօթատեղիին մէջ, կեդրոն (ԱՅԵՏԻ շէնքի տես):

THE CULTURAL HOUR @ HAIGAZIAN UNIVERSITY Invites you to an illustrated lecture On THE ENDANGERED HERITAGE BUILDINGS OF BEIRUT By MONA HALLAK (ARCHITECT) Tuesday, February 25, 2003 - 7 p. m. Haigazian university auditorium, Kantari.

ԸՆԿԵՐ ՄԸ


ՀՐԱՄԹ

Գրական Էջ

Արևաբանական Երգեր

ԳԵՏԸ ԵՒ ՄԱՀԸ

Պուէյլ...
 Պուէյլ...
 աշտանակին վանգակները կորսուեցան յատակը ծովուն,
 ջուրն է կարասներուն մէջ եւ մայրամուտը ծառերուն,
 մինչ կարասներէն կը կաթկթին վանգակներ անձրեւային,
 որոնց բիրեղները տնքոց-տնքոց կը հալին՝
 Պուէյլ... Պուէյլ...
 եւ արեանս մէջ կ'աճի կարօտ մը
 դէպի քեզ, Պուէյլ,
 ով գէտ իմ, տխուր անձրեւի նման:
 Կ'ուզեմ խոյանալ խաւարին մէջ,
 կը պրկեմ բոռնոցներս, որ ընդհանուր կարօտ մը կ'ամփոփեն
 մէն մի մատի մէջ, կարծես թէ ուխտեր կը կրեմ
 քեզի համար՝ ցորենէ եւ ծաղիկներէ:
 Կ'ուզեմ յայտնուիլ բլուրներուն մահիճէն՝
 տեսնելու համար ամբարտաճիւղի միջեւ ման եկող լուսինը երկնային,
 որ կը ցանէ ստուերներ եւ կը լեցնէ կողովներ՝
 ջուրով, ձուկով, ծաղիկներով:
 Կ'ուզեմ սուշուիլ, քու մէջ սուշուիլ,
 հետեւիլ լուսինի եւ լսել ձայնը խիճերուն,
 որոնք քեզմէ կը ծամանեն, յատակներու խորերէն՝
 ինչպէս դայլայլը ծառերուն ծաղկած հապարտութիւններու:
 Արցունքներու անտա՞ն ես դու, թէ գէտ արդէօք,
 ձուկերն արթուն գիշերները արդէօք անձայն
 կախարդանքի՞ն մէջ կը նստեն,
 եւ աստղերն այս սպասումին մէջը իրենց
 մետաքսներով հապարտոր նորաբոյսէ՞ր կը կերակրեն...
 Պուէյլ... Պուէյլ...
 եւ հաւաքել ոստրէները անդունդներու՝
 կ'ուզեմ սուշիլ խորերէն հիմա
 անոնցմէ տուն մը կառուցելու համար,
 ուր կը լուսաւորէ կանաչը ջուրերուն եւ ծառերուն
 եւ կ'ոռոգեն լուսին եւ աստղեր
 եւ մակընթացութեան հետ դէպի կախարդանք կ'ուղղուին,
 զի մահը աշխարհ է տարօրինակ, որ մանուկները կը հմայէ
 եւ որուն գաղտ դուռը քու մէջ է, Պուէյլ...



Հատուած՝ Shw Ալ-Ազգաուի «Աղաղակը» պատանոն

3
 «Հասցէ չձգեց», ըսաւ տնօրէնը թատրոնին՝ բառերը ծամծմելով:
 4
 Իր պատկերը կը գծեմ ձիւնին վրայ եւ կանաչ գոյնը կը բո-
 ցավարի իր գոց մեղրագոյն աչքերուն մէջ, կենսասագոյն վառ
 շուրթերը կը խոնարհին այտիս վրայ, ձեռքերը կ'ազուցուին
 յաւիտենական գիրկընդխառնումով, բայց ձեռք մը կ'երկարի,
 կը ջնջէ պատկերն իր՝ սպաննուած գոյնին վրայ ձգելով՝ նշոյլ
 մը մահացած օրուան լոյսին:
 5

Կեանքիս արեւն անհետացաւ - ոչ ոք կ'ըմբռնէ: Սէրը կոյր
 եւ մենաւոր գոյութիւն մըն է: Ոչ ոք կը ճանչնայ այս աքաղաղ-
 արքայութիւնը:
 (Հատուածներ) ԱՊՏԸԼ ՈՒԱՀՀԱՊ ՊԱՅՏԸԹԻ

ԵՐԿԻՐ ՄԸ՝ ՈՐ ՀԵՍ ՏԵՄԵՐ

Կը ծիլ գլխուն մէջ
 դիմագիծերը կ'ահագնանան
 կարծես լոյսն է ծփացող գետերուն մէջ
 շուշանն ու մոխիրը կը հսկեն իր վրայ
 կը շրջի եւ կ'արթնայ իր անցեալի մառաններէն
 Երկիր մը նստած թախտի
 որուն տակ կը մլաւէ աշխարհը գոր կը յիշեմ
 Կը փնտռէի զինք
 կայներուն վրայ ճամբորդութեան
 ընթացանութեան քաղաքներուն մէջ
 խորը հեռաւոր սրճարաններուն
 սաւաններուն ու արոններուն միջեւ
 կը մարի գիշերուան հետ
 կը ծնի լոյսին հետ
 յար եւ նման եթերին
 կ'անխնայ եւ մառախուղն արշալոյսին
 կը խտանայ խաւարներուն մէջ նայուածքին
 Երկիր մը
 որ կը մահանայ իր արձակին մէջ
 մելանին մէջ՝ գոր հոսեցուց
 ոչ մէկ փայլակ կը կանչէ զինք
 ոչ մէկ մայր կու լայ զինք
 եւ չունի ոչ մէկ մակոյկ
 զօրամասին մէջ ջուրին
 Երկիր մը...
 որ գուցէ ծնի
 իր մահով՝ որ իր մէջն է
 Փարիզ, Փետրուար 2003 ԱՊՏԸԼ ՔԱՏԵՐ ԱԼ - ՃԱՆԱՊԻ

ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Նժոյզները
 կ'արածին ձիւներուն մէջ
 արեգակը երբեմն կը յայտնուի պաղ գոյնով
 կը ջերմանայ ձիւնին մէջ
 եւ երբեմն կը տեսնէ աւելի հեռու
 անտառին բացատէն՝ լիճերը
 երամբ բարին
 սկիւռը
 թռչունը
 կարծես թէ տիեզերքը
 դասաւորուեցաւ տիեզերք մը այդ պահուն...

 դուն հիմա չես լսել ինչ որ կը լսես
 երբ գիշերը կ'ամփոփուի
 եւ նժոյզը կ'ապաստանի
 դուն հիմա նկարին մէջն էս
 հանդարտ
 նախքան որ գիշերային մղձաւանջիդ մէջ
 օդանաւերն այդ խուժեն:
 Լոստոն, 4 / 2 / 2003 ԱՊՏԸԹ ԵՌՈՒՄԷ

ԱՆԿՑԻ՛ ՄԱՀԸ, ԿԵՑՑԻ՛ ԿԵԱՆՔԸ...

Սիրտը տատակ էր տնքացող
 սիրտը տնքոցն էր եւ ուրիշ ոչինչ
 սիրտը մայր տաճարն էր ղողանջող
 սիրտը արձակուող առած էր՝ ինքն իրմէ
 պատերազմ մը՝ որ կը փոխաբերուէր հո՞նա՞
 ուր մնացած էր յիշատակուող բեկոր մը հոգիէն:

ՔԱՉԸՄ ՃԻՀԱՏ

Ա՛նկասկած:
 Խաղաղապաշտ միլիոնաւոր մարդոց սրտե-
 րէն անցեալ շաբաթավերջին բարձրացած «Ո՛չ
 պատերազմին, այո՛ խաղաղութեան» պոսթերու-
 մին հարազատ մէկ պատկերը հանդիսացող վե-
 րի տողերը ո՛չ միայն լաւագոյնս կ'արտաբնացը-
 նեն իրաքցի տարագիր բանաստեղծին սիրոյ,
 տառապանքի եւ երազի թախծաշեշտ տրոփնե-
 րը, այլեւ՝ պատերազմի օրըստօրէ՛ մօտեցող
 հրէշէն խուճապահար Միջագետքի ժողովուր-
 դին եւ համայն մարդկութեան անձկութիւնը:
 Մահուան եւ աւերի հաւանական բեմադրու-
 րիւններու մղձաւանջին ուղղակի ազդեցու-
 րեան տակ գրուած «Միբերգու՛թիւն» խորագըր-
 եալ բերթուածէն քաղուած այս բանի մը տողե-
 րը ո՛չ մէկ մեկնաբանութեան կը կարօտին:
 Վիշտն ու տառապանքը կը յանձնեն տնքացող
 խաղաղութեան թախծաշեշտ կշռոյթով, բա-
 զում՝ քաղաքակրթութիւններու նուաճումներով
 հպարտ իրաքցի ժողովուրդին պարտադրուած
 բռնատիրակա՛ն «յրախտ»ը այս անգամ «ժո-
 ղովրդավար» դիմակ կը հագնի եւ մարդկային
 ու քաղաքակրթական դարաւոր արժեքներ ու
 սրբութիւններ դարձնալ կ'ոտնակոխուին... յա-
 նուն մարդկայնութեան եւ ահուսարսափեալ
 իրաքցի ժողովուրդին բարօր ու խաղաղ ապա-
 գային սիրոյն:

Աշխարհ կը տուայտի սակայն: Միլիոններ
 կ'ալեկոծին ահագնօրէն եւ պատերազմի գե-
 րարդիական վիշապները կը շարունակեն շար-
 ժիլ երկրի մը ուղղութեամբ, որուն մանուկնե-
 րուն սարսափահար աչքերը ամէն օր աւելի
 կ'ընդլայնին, անգործ բազմութիւններուն շար-
 քերը կը խտանան ու կը խտանան եւ սովամահ
 ծծկերներուն թիւերը շարունակ նորանոր
 մրցանիշներ կը կտարեն: Առասպելներու եւ
 չաստուածներու երկիրը կը նահանջէ տասնե-
 րորդ գիծ, Կիլկամէշը կը թաղուի մոռացու-
 րեան մոռախուղին մէջ, հագար ու մէկ գիշեր-
 ներու հեքիաթային Պաղտատէն երգն ու ծի-
 ծաղը, Շահրազատն ու քերթողները փախուստ
 կու տան յանկարծ եւ ամենուրեք կը տիրէ աւա-
 զահող մը ու մահափիւռ զենքերու ամբողջա-
 կան ահուսարսափ: Սայեապներու, Պայեաթի-
 ներու, Եուսէֆներու ու Ճիհատներու հայրե-
 նիքը կարծես կը փոխադրուի հեռուոր մոլո-
 րակներ:

Բայց... ո՛վ գարմանք... միլիոնները կը գո-
 ռան՝ «Ո՛չ պատերազմին, այո՛ խաղաղութեան»:
 Կ'ալեկոծին եւ ողջ երկրագունդը կ'ալեկոծեն
 միլիոն առ միլիոն՝ յանուն մարդկային արժեք-
 ներու եւ սրբութիւններու, յանուն արդարութեան
 ու ժողովրդավարութեան, սիրոյ ու խաղաղու-
 րեան, եւ ընդդէմ՝ մահուան, աւերին, վայրագու-
 րեան, բռնատիրութեանց եւ ամէն տեսակի ար-
 տաքին միջամտութեանց...

Կ'ըմբոստանան բոլորը եւ, առաջին հերթին՝
 մարդկութեան խղճի եւ արժանապատուութեան
 արժանաւոր պահակները՝ բանաստեղծներն ու
 գեղանկարիչները, իմաստասերներն ու բեմադ-
 րիչները, վիպագիրներն ու երգիչները: Նոյնիսկ
 քաղաքակրթութեան ախոյեան ներառելի մար-
 տահրաւեր կարդացող ամենագոր Միացեալ Նա-
 հանգներու մեծահամբաւ մտաւորականներ ու
 արուեստագետներ, որովհետեւ անոնք նաեւ քաջ
 գիտեն, որ Իրաք դարեր շարունակ հարուստ
 եղած է ո՛չ միայն իր մշակութային նուաճում-
 ներով ու արտակարգ հանճարներով, այլեւ հան-
 դիսացած է համամարդկային քաղաքակրթու-
 թեան հիմնասիւններէն մէկը, եզակի օրրան մը:
 Եղած է շրջանին վիրաւոր ուսն ու սոխակը
 եւ Պաղտատի պալատներէն ու զինետուններէն
 բարձրացած տառապանքի եւ լոյսի բերթուած-
 ներուն կշռոյթներով հոսած են կենսապաշ-
 տութեան ու սիրոյ անվերջ հրակերներ, ազա-
 տութեան ու արժանապատուութեան քաղցրա-
 հունչ կոչներ:

Եւ Պաղտատը, ինչպէս Պէյրութը, եղած է
 գրական - մշակութային մայրաքաղաք, որուն
 տառապեալ հողին վրայ գիրար ողջագուրող
 եփրատի եւ Տիգրիսի ստեղծագործ հանդիպու-
 մէն սիրոյ ու տառապանքի, պայքարի ու հա-
 ւատքի բանաստեղծներ ծնած են շարունակ,
 լոյս եւ սէր փառաբանած են անդադար եւ պա-
 տերազմի ու մահուան սպառնալիքին տակ ան-
 գամ կեանքի ու սիրոյ հրաշափառ երգեր հնչե-
 ցուցած են...
 Որպէսզի
 Սէրն ու լոյսը, բարին ու գեղեցիկը, արդա-
 րութիւնն ու ազատութիւնը տիրեն աշխարհով
 մէկ, կեանքը դառնայ բանաստեղծութեան մը
 չափ գեղեցիկ ու ոգեշնչող, հպարտօրէն եր-
 կիլըր թագադրէ եօթնախորհուրդ ծիածանը եւ
 ողջ մարդկութիւնը ցնծայ. «Անկզի՛ մահը,
 կեցցե՛ կեանքը...»:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՊԱՏԸՐ ՀԱՔԵՐ ՄԱՅԵԱՊ

ԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐ

Այդ առաւօտ, բանաստեղծն ու սուլթանը
 երկու դէմքեր էին էութեանս մէջ:

Գլուխդ պիտի կախեմ բերդին դրան վրայ
 եւ պիտի հանեմ աչքերդ
 պիտի անդամահատեմ ձեռքերդ
 եւ ոչ մէկ կաթիլ արցունք պիտի չթափուի քեզի համար
 մոմ պիտի չվառի
 եւ միտդ պիտի բաշխեմ գիւղին մէջ
 գիւղին անօթիներուն
 գիւղին բորենիներուն
 եւ պիտի խմենք կենացը ապտազրուածներուն
 եւ ամօթի ջնջումին
 որովհետեւ
 բանաստեղծը մահապարտ է
 եւ ես սուլթանն եմ
 արմատներ կը շրջեմ վերօ վերօ
 զրպարտութեան պէս
 եւ պիտի ջնջեմ տիրութիւնը Ուրբաթ գիշերներուն
 եւ պիտի լուսն կոչնակը գիւղին
 ամէն կասկածէ
 ամէն երկրնտրանքէ
 եւ ամէն տարակուսանքէ

Բայց եւ այնպէս
 հաւատա՛ ինձի
 զգացի ինչպէս ամօթն զգացի
 եւ կրակը շօշափեցի
 եւ ճանչցայ մարդը անպատուութեան
 աչքերուն մէջ փոքրերուն
 եւ մեծերուն
 եւ լացի ինչպէս ապտազրուածները կու լան
 լոռութեան մէջ
 եւ մահդ ազդեցի իմ իսկ մահով
 բայց եւ այնպէս
 հաւատա՛ ինձի

Գլուխդ պիտի կախեմ բերդին վրայ
 եւ թող սուլթանը մնայ
 վերօ վերօ արմատներ շրջելով
 զրպարտանք ինչպէս

ՊՈՒԼՆԵՏ ՀԱՅՏԱՐԻ

ԿԸ ՇՆԻՄ... ԵՒ Կ'ԱՅՐԻՄ ԻՄ ՍԻՐՈՎ

1
 Լարան կ'արթնայ յիշողութեանս մէջ - թաթարական տատ-
 րակ, կը հաստատուի ինձով, կ'երկարաճուի, կը յօրանջէ,
 կը ճանկէ դէմքն իմ տենչահար եւ զիս կը զրկէ քունէ: Չինք
 կը տեսնեմ տարտարոսներուն մէջ բեւեռային քաղաքներուն,
 կը կախէ զիս իր խոպոպներով եւ նապաստակ մը ինչպէս
 վար կ'երկարէ պարսկական կատարէն՝ արցունքներու թելով
 քաշուած: Կը պոռամ՝ «Լարա» եւ սարսափահար հովը կը պա-
 տասխանէ՝ «Լարա»: Կը վազեմ հովին ետեւէն, կը վազեմ գի-
 շերուան շոգեկառքերուն ետեւէն եւ հարց կու տամ սրճա-
 րանի մատուցողուհիին. ոչ ոք կը գիտնայ: Առանձինն կ'անց-
 նիմ մաղուող ձիւնին տակէն եւ սայթաքած սէրն իմ կ'արտաս-
 ուեմ աշխարհի բոլոր սրճարաններուն ու գինետուներուն
 մէջ:
 2

«Լարա՛ն... մեկնեցաւ»,
 «Լարա՛ն... անձնասպան եղաւ»,
 դռնապանը ըսաւ, իր դրացուհին ըսաւ, թաղուեցայ տաք
 արցունքներու մէջ, մինչ ուրիշ մը ըսաւ. «Ոչ ոք գիտէ, ոչ
 իսկ սատանան»:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՆԵՐԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Քայլ պահելու համար տեղեկատուական արհեստագիտության հետ եւ անոր օգտագործման համարողական դիրքի հասանելի դառնալու ուղղումների մասին ակնարկներ են արվում, Հայաստանի պետական կառույցները անցնող քանի մը տարիներում օժտուկներով համացանցի կայքերով, որոնք հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով տեղեկություններ կը փոխանցեն հանրությանը: Պատկան մարմինները շքաւարարուցան սուկական տեղեկատուական կամ լրատուական կայքեր պատրաստելով, եւ ճիգ թափուցնալ այս կայքերը, յատկապէս անոնցմը նման, փոխներգործու (ինտերնէթթի) դարձնել: Այս ծրագիրը յաջողութեամբ պատկանալու եւ Հայաստան դարձաւ աշխարհի երկրորդ երկիրը, որ համացանցի միջոցով փոխանցու սկսաւ տրամադրել այլ երկիրներու քաղաքացիներուն:

Ստորեւ կը ներկայացնենք պետական շարք մը կառույցներու համացանցի պաշտօնական կայքերուն հասցէները:

- Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կայքը՝ www.gov.am:
- Հայաստանի Հանրապետութեան նախագահին պաշտօնական կայքը՝ www.president.am:
- Հայաստանի Ազգային ժողովի պաշտօնական կայքը՝ www.parliament.am:



● Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան կայքերը՝ www.armenianforeignministry.com եւ www.armeniadiaspora.com:
Նշենք նաեւ, որ Լեւոնային Ղարաբաղի կառույցները նոյնպէս ունին իրենց պաշտօնական կայքերը: www.nkr.am Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական կայքն է, իսկ www.president.nkr.am՝ ԼՂՀի նախագահին կայքը:

ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


Համացանցը դարձած է մեր անձնական, ընկերային թէ աշխատանքային կեանքին անբաժանելի մէկ մասնիկը: Ժիշդ այս պատճառով ալ համացանցը, երբ կը դառնայ ահաբեկչական արարքի գոհ, ժամեր եւ յաճախ օրեր հաղորդակցութեան եւ տեղեկատուութեան աշխատանքները կը խանգարուին:

դին էր «Մայքրոսոֆթ», որ քանի մը օրուան համար փակեց ե-նամակի իր «սըրվըր»ները՝ «մաքրագործում» կատարելու համար:

իրենց քարոզչական եւ պահանջատիրական արշաւը կատարելու համար: 2000ի Փետրուարին համաշխարհայնացումի խորհրդանշաններ հանդիսացող «Ամազոն»ի, «Սի.էն.էն.»ի «Եասոն»ի, «Ի.Պէյ.»ի եւ այլ ընկերութիւններու կայքերը ենթարկուեցան հակահամաշխարհայնացում շարժումի ջատագով հէջըներու համակարգուած յարձակումներու: Կայքերէն ոմանք երկարատեւ դադրեցան գործել:



կամ կը դադրին: Անցնող քանի մը տարիներուն համացանցը շուրջ տասը անգամ ենթարկուած է հէջըրներու ահաբեկչական հակառակահարձակումներու, որոնց համառօտ պատմականը կը ներկայացնենք ստորեւ:



ՄԱՐՏ 1999 - «ՄԵԼԻՍԱ» ԺԱՂԻՐ ԵՒ ՕԹԱՆԻ ԴԵՄ ՅԱՐՉԱԿՈՒՄ
Համացանցը «վարակած է» համակարգչային բազմաթիւ ժահրերով, սակայն առաջին ժահրը, որ մեծ վնասներ հասցուցած է տեղեկատուական արհեստագիտութեան, եղած է 1999ի Մարտին տարածուած «Մելիսա» ժահրը: Ե-նամակի միջոցով համակարգչային բազմաթիւ ժահրերու համաշխարհային յարձակում մը կատարելով ՕթԱնի ցանցին վրայ՝ խանգարեցին անոր համակարգչային ղրութիւնները: ՕթԱնի պաշտօնական կայքը դադրեցաւ գործել, եւ անոր ե-նամակի ղրու-


ԱՐՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՆՆԵՐ

«ՈՒԷՊԲԵՄ ՓՐՕ - Ի. ԷՔՍ.»



Կը թուի, թէ հարտուէրներ արտադրող «Քրիէյթիւ» ընկերութիւնը ամիսը անդամ մը «Ուէպքէմ»ի նոր տարբերակ մը հրապարակ կը հանէ: Մարդ կը մղուի մտածելու, թէ նման «աճապարանք» կ'ըլլայ ի վնաս որակի եւ նորարարութեան, սակայն ընկերութեան «Փրօ-էքս» ուէպքէմը կու գայ հակառակը փաստելու: Ի տարբերութիւն անցեալին արտադրուող հարտուէրներու, որոնք համակարգչին միացնելու համար հարկ էր յաճախ ժամ մը անցընել անոր դիմաց, այսօրուան «կաճէթ»ները դիւրութեամբ կը միացուին համակարգչին: Այս առումով, «Փրօ-էքս» բացառութիւն մը չէ: Իր թեթեւութեամբ եւ դիւրամատչելիութեամբ յատկանշուող այս սարքը վիտէօ արձանագրութեան եւ սփռումի բարձր կարողութեամբ օժտուած է: Չայն կարելի է օգտագործել նաեւ իրեւ թուագրային բամբակ, որ 1024 x 768 յատկութեամբ լուսանկարներ կը տրամադրէ: Շուրջ 100 տոլար արժող այս սարքին մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել www.creative.com կայքին մէջ:


«ԹՐԵԻԸԼՄԷՅԹ ՍԻ. 100»



Պատահաբար վրայ գրիչով արձանագրութիւններ կատարելու առիթը ընձեռող համակարգիչներ պատրաստելու տարիներով եղած է մասնագէտներուն երազը: Այս արհեստագիտութեան իրագործման դիմաց ցցուող գլխաւոր խոչընդոտը եղած է այն իրողութիւնը, որ գիտնականներ չեն կրցած ձեռագիր «կարդալու» կարողութիւն ունեցող համակարգիչներ կատարելագործել: Սակայն վերջերս Մայքրոսոֆթը ընկերութեան ճիգերով կարելի եղաւ յաղթահարել այս դժուարութիւնը եւ վերջերս արդէն շուկայ իջան «Թէպլըթ Փի. Սի.»ները, որոնք կը նկատուին «Փի. Սի.»ի եւ «Լէֆթիփ»ի յաջորդները: «Թէպլըթ Փի. Սի.»ներ արտադրեցին քանի մը ընկերութիւններ, որոնց կարգին՝ «էյսըր», որուն հրապարակած «Թրեւըլմէյթ Սի. 100»ը յատկանշական է: Առաջին ակնարկով սարքը նման է սովորական «Լէֆթիփ»ի, որ սակայն չունի «Սի. Տի. Ռոմ» եւ «Ճրոփի» փոփոխութիւններով, որոնց շնորհիւ գրեթէ իրենց երկտորոնային սարք կարելի է միացնել «Թրեւըլմէյթ»ի: Սարքը նաեւ օժտուած է 10 ինչ պատաստով եւ «մոտեմ»ով: Երբ կը դարձնենք սարքին միւս երեսը, ահա կ'ունենանք «Թէպլըթ Փի. Սի.» մը, որուն վրայ կարելի է նոթագրութիւններ կատարել: Այս գրութիւնները կարելի է յետոյ արձանագրել սարքին մէջ կամ զանոնք վերածել համակարգչային «Փոնթ»երով շարուած գրութեան: Շուրջ 2000 տոլար արժող այս սարքին մասին տեղեկութիւններ կարելի է գտնել www.acer.com կայքին մէջ:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՆՑԵԱԼԸ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

«Պրիթիւ Փէթ» պատմական լրատուական գործակալութիւնը պատրաստած է, իր վկայութեամբ, «աշխարհի ամէնէն մեծ համացանցային լրատուական արհիւրը», որ կ'ընդգրկէ 3500 ժամ վիտէօ արձանագրութիւններ (Անգլիոյ ֆուլթայուլի փառքը, «Պրիթիւ-նիս», արքայական ընտանիքին լուրերը, եւ այլն) տեղադրելով համացանցին վրայ: Կայքէջն կարելի է ձեռքարկել արձանագրել «միջակ» յատկութեամբ հատուածներ, իսկ կայքին բաժանորդագրուելու համար հարկ է վճարել տարեկան 75 - 150 տոլար: Կայքի պատրաստութեան ընթացքին եղած մտափոխութիւնները, թէ կայքին տրամադրած տեղեկութիւններէն եւ վիտէոներէն օգտուելի պիտի ուզեն միայն «պատմութեան խենթ»ներ, յօստ ցնդեցան, երբ կայքի հրապարակումին առաջին երեք օրերուն 250 հազար այցելուներ կայքէջն արձանագրութիւններ կատարեցին: Կայքին հասցէն է www.britisshpathe.com:




Վրիչներ վարակող այս ժահրը «զոհ» համակարգիչին մէջ ամբարուած առաջին 50 ե-նամակի հասցէներուն ինքզինքէն օրինակ մը կ'ուղարկէր: Այս ժահրով առաջին վարակուողները եղան 26 Մարտին: Մինչեւ 29 Մարտ արդէն 100 հազար ցանցեր վնասուած էին ժահրէն: Վնասուած ընկերութիւններու կար-

թիւները «ռմբակոծուեցան» համակարգչային ժահրերով եւ նոյնպէս դադրեցան գործել: ՓԵՏՐՈՒԱՐ 2000. ՀԱՄԱՍՏԱՆԱՎԱՅՆԱՅՈՒՂ ՀԱՐՄՈՒՄԸ ԿԸ ՅՆՅԷ ՀԱՄԱՑԱՆՑԸ
Միջազգային դրամատիրութեան դէմ պայքարողներ յաճախ կ'օգտակուեն համացանցը

Մանկապատանեկան

ԳԵՂԵՑԻԿ ԱԿՈՒԱՆԵՐ՝ ԱՄԲՈՂՁ ԿԵԱՆՔԻ ԸՆԹԱՅՔԻՆ

ԲԵՐԱՆԻԳ ՄԵՉ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՐԺԵՔԱԽՈՐ ԳԱՆՉ ՄԸ ԱԿՈՒԱՆԵՐԳ



Ինչի՞ կը ծառայեն ակուաներդ. կը ծծելու, փրցնելու, ծամելու ու տելիքները՝ զանոնք մարտողութեան պատրաստելու համար: Անոնք քեզի կ'օգնեն նաեւ արտասանելու S եւ Դ հնչիւնները: Այս բաղաձայնները արտասանելու համար լեզուդ կը յենի ակուաներուդ վրայ: Անոնք քեզի նաեւ կարելիութիւնը կու տան սովելու եւ գեղեցիկ ժպտ մը ունենալու:

Լինտերուն մէջ ակուանի երկու խաւեր կը պատրաստուին. կաթի ակուաները եւ չափահասութեան ակուաները: Կաթի առաջին ակուաները կը սկսին յայտնուիլ երեխային ճրդ ամիսէն մինչեւ

երեք տարեկանը: Սակայն անոնց տակ վերջնական ակուաները կը կազմուին կամաց-կամաց: Կազմուելու ընթացքին այս նոր ակուան կը փճացնէ կաթի ակուանին արմատը: Ան կը սկսի շարժիլ, շարժիլ եւ ապա կը փրթի: Հետեւաբար անոր տեղը պարապ է եւ չափահասութեան ակուաները կամաց-կամաց կը սկսին յայտնուիլ:

ԱՌՈՂՁ ԱԿՈՒԱՆԵՐ ՊԱՆՔԵՐ

Այս վերջնական ակուաները բերանիդ մէջ պիտի մնան ամբողջ կեանքիդ ընթացքին: Հետեւաբար դուն անոնց լաւ հոգ պէտք է տանիս՝ առաւօտուն եւ գիշերը զանոնք վրձնելով, ապա ամէն 6 ամիսը անգամ մը կանոնաւորապէս ատամնաբուժին այցելելով: Ան պիտի քննէ ակուաներդ եւ պիտի կատարէ անհրաժեշտ դարմանումներն ու ցուցմունքները:


Բազմաթիւ մանրէներ «կը բնակին» բերանիդ մէջ եւ կը հաստատուին ակուաներուդ վրայ: Ուտելիքներուն պարունակած շաքարներուն հետ կապակցութեան մէջ մտնելով՝ անոնք կ'արտադրեն թթու նիւթեր: Այս նիւթերը կը յարձակին ակուաներուդ վրայ եւ փոքր ծակեր կը յառաջացնեն: Առիթէն օգտուելով՝ մանրէները ակուաներուն մէջ կը մտնեն այդ ծակերուն ընդմէջէն: Երբ ակուան կը փտի, միայն ատամնաբուժի կը յարձակուի զայն խնամել: Ան կը հանէ փճացած մասերը եւ ակուան կը վերակազմէ յատուկ խմորով մը:

ԳԻՏԵԻ՞Ր, ԹԷ...

● Առաջին 4 ակուաները կը բուսցնին մօտաւորապէս 6 տարեկանին, յաջորդ չորսը՝ մօտաւորապէս 12 տարեկանին եւ վերջին չորսը (իմաստութեան ակուաները)՝ 17-21 տարեկանի միջեւ, սակայն այս վերջինները ամէն մարդու պարագային չէ, որ կը յայտնուին:

● Ակուանի վրձնելու պէտք է փոխուի մօտաւորապէս 3 ամիսը անգամ մը, երբ անոր մագրը կը սկսին իրարմէ քայտուիլ: Այս ձեւով դուն տարին պիտի գործածես ակուանի վեց վրձնի:

ՊՏՈՒՂՆԵՐ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐ



ՆԱՐԻՆՁԸ

Նարինը օգտակար պտուղ մըն է, որովհետեւ ան շատ հարուստ է Սէ- կենսանիւթով: Անոր բոլոր բարեբերէն օգտուելու համար գայն թարմ կեր:


Իսկ եթէ կ'ուզես անոր հիւթը խմել, պէտք է անմիջապէս քամես ու խմես, որովհետեւ անոր կենսանիւթերը շատ արագ կը փճանան, երբ օդին հետ շփման մէջ մտնեն:

ԱՌԱՒԵԼ

Նարինին կեղեւը կը գործածուի տարբեր տեսակի ճաշերու համ տալու համար:

Կեղեւին տաշուքը կը գործածուի կարկանդակներուն մէջ, որոնց կու տայ իւրաքանչիւր բոլոր մը եւ համ մը:

ԹԷՅԸ



Ջուրէն ետք թէյը աշխարհի ամէնէն շատ խմուած հեղուկն է: Ի՞նչպէս ան դարձած է աշխարհահռչակ: Անոր յարողութիւնը կու գայ իր պատրաստութեան պարզութենէն եւ տեսակաւոր ու հարուստ համերէն:

Թէյին մէջ մենք կը գտնենք քաֆէինը, որ քունի արգելիք եղող նիւթ մըն է: Որպէսզի ան շատ վտրտար չըլլայ, ձգէ, որ թէյը ըտրուի մէջ մնայ առաւելագոյնը 3 վայրկեան: Համը մեղմացնելու համար կընես նաեւ քիչ մը կաթ աւելցնել:

Ըստ առասպելին, չինացի կայսր մը յայտնաբերած է թէյը: Երբ ան կը քննարկ թէյի ծառի մը տակ, տերեւ մը ինկաւ անոր ետեւը ցած ընկաւ մէջ եւ տուաւ անուշ բոլոր մը...


ԱՌԱՒԵԼ

Համով թէյ մը պատրաստելու համար պէտք է յարգել հիմնական օրէնքները: Պէտք է թէյամանը տաքցենել՝ անոր մէջ եռացած ջուր պարպելով, ապա գայն դարձեալ տաքցնելով (ուշադրութիւն, չափահաս մը միշտ օգնութիւն խնդրէ, երբ տաք ջուրով կ'աշխատես), եւ վերջապէս, անոր մէջ թէյի տերեւները դնելով:

ԳԻՏԵԻ՞Ր, ԹԷ

Թէյի թուփին բարձրութիւնը կընայ մինչեւ 10 մետրի հասնիլ:

ՊՐԱՍԸ



Պրասը (կանաչ սոսի ընտանիքէն, աւելի հաստ եւ աւելի մեծ) մեզի ծանօթ է շատ հին ժամանակներէն: Այս «տերեւ - բանջարեղէն» դարձած է կախարհ շրջանի ազգային բանջարեղէնը:

Սակայն ան բանջարանոցին «աստղ»ն է նաեւ անոր համար, որ գայն կարելի է ամբողջութեամբ ուտել:


Եթէ ամբողջ պրաս մը ուտես, անիկա քեզի պիտի հայթայթէ կենսանիւթեր, հանքային աղբը եւ բնութեան: Նոյն ատեն, ան շատ քիչ ջերմութ կը պարունակէ:

Կ'ըսեն նաեւ, թէ պրասը ունի մարսողական դրութիւնը մաքրելու յատկութիւնը:


ԱՌԱՒԵԼ

Երբ ապուր մը կը պատրաստես, ձգէ, որ անիկա եփի շատ մեղմ կընակի վրայ, որովհետեւ միւս բանջարեղէններուն նման, պրասն ալ իր համը եւ առաւելութիւնները կը պահէ, երբ շատ եփած չէ: Հետեւաբար ձգէ, որ ապուրը լաւ եփի, սակայն՝ առանց եռալու:


Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս օգնել Կարմիր Գլխարկիկին՝ որպէսզի ան հասնի մեծ մօրը տունը, հեռու մնալով վտանգներէն:



Քանի՞ փուչիկ պիտի մնայ, եթէ ձգես 3ով բաժնուող քիւր ունեցող փուչիկները: Իսկ եթէ ձգես 5ով բաժնուող քիւր ունեցող փուչիկները:



Կրնա՞ս իւրաքանչիւր կենդանիի համապատասխանող տունը գտնել:



Եթէ Պետիկ ամէն օր 3 պոնպոն ուտէ, քանի՞ օրէն պիտի վերջանան ամոնք:

ԳԻՏԵԻ՞Ր

ՄԵՐ ԵՐԿՐԱԳՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Ամէնէն բարձր գագաթը էվերէսթն է՝ 8847 մետր:
- Ամէնէն բարձր ջերմաստիճանը՝ 58° (չուքին), էլ Ազիզիայի մէջ, Լիպիա:
- Ամէնէն ցած ջերմաստիճանը՝ - 89°, Վոսթոք, իսրայէլական (կեդրոնական) ովկիանոսին մէջ կղզի մը:
- Ամէնէն չոր անապատը՝ Ալթաբամա, Չիլիի մէջ:
- Ոչ մէկը կը յիշէ, թէ հոն երբեքից անձրեւած է:
- Ամէնէն մեծ ովկիանոսը՝ իսրայէլականը, որ կը ներկայացնէ երկրագունդին ծովերուն գրեթէ կէսը:

ԿԱՐԵՒՈՐ ԹԻԻՆԵՐ

- 5 մարդոցմէ չորսը կ'ապրի աղքատ երկիրներուն մէջ:
- Մարդոց 50 առ հարիւրը լաւ չի սնանիր:
- Ամէն տարի 30 միլիոն մարդ կը մեռնի անօթութենէն:
- 1,3 միլիառ մարդ կ'ապրի օրական նուազ քան մէկ տոլարով:

ՄԱՐԴԻԿ

- Ամբողջ աշխարհի բնակչութեան կէսը կ'ապրի Ասիոյ հարաւը եւ արեւելքը:
- Ովկիանիան ամէնէն նուազ բնակուած ցամաքամասն է՝ միայն երկու բնակիչ իւրաքանչիւր քառակուսի քիլոմետրի համար:
- 1900 թուականին 10 մարդոցմէ մէկը կ'ապրէր քաղաքի մէջ: 2000 թուականին երկու մարդոցմէ մէկը կ'ապրէր քաղաքի մէջ:

ԳԻՏԵԻ՞Ր, ԹԷ...

- 3 միլիառ տարիներ առաջ, կապոյտ ջրախոտները եղան առաջինները, որոնք սկսան գործածել ջուրը եւ արեւը՝ սնանելու համար, նոյն ատեն թթուածինը դուրս տալով: Բան մը, որ մեր երկրագունդին օդը չնչնի դարձուց:
- Երկրագունդի վրայ գոյութիւն ունին 30 ցուրտ կամ տաք անապատներ:
- Ովկիանոսները կը պարունակեն 1,35 միլիառ խորանարդ քմ. ջուր:



ԽՈՒՆԱՆՑ

ՀԱՄԵՄՆԵՐՈՎ ԽՆՁՈՐԻ ՀԻԻԹ

Պէտք ունիս (3 հոգիի համար) 1 լիթր խնձորի հիւթի, 1 ապուրի դգալ մեղրի, 2 կասիայի շիւզի, 2 մեխակի գամի, քիչ մը անխոսի:

Պատրաստութիւնը 1) Իրարու խառնէ խնձորին հիւթը, կասիան, անխոսը, մեղրը եւ մեխակի գամերը: 2) Պզտիկ կաթսայի մը մէջ այս խառնուրդը տաք ցուր մեղմ կընակի վրայ, առանց եռացնելու, 15 վայրկեան: Հեղուկը անցուր քամոցէ մը եւ հրամցուր գաղջ:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԵՒՐՈՊԱ - ԼԻԲԱՆԱՆ ԾԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԱԽՈՅԵԱՆ.
ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ՝ ՏՊԱՒՈՐԵՅ



Չախէն աջ՝ Արսէն Եղիազարեան,
Գագիկ Օհանջեան և Զեարիկ Մուրատեան

Շաբաթավերջին, «Քոմֆորթ» պանդոկի սրահին մէջ վերջ գտաւ Եւրոպա - Լիբանան ճատրակի բարեկամական մրցաշարը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 18 վարպետներ (Լիբանանի լաւագոյն 9 վարպետները, ընդդէմ՝ Եւրոպացի վարպետներուն): Մրցաշարի ինը հանգրուաններու աւարտին եւրոպական կազմը յաղթական դուրս եկաւ կէտերու հակադասական առաւելութեամբ: Անգամ մը եւս փաստելով հայրենի ճատրակի վարպետներու գերակայութիւնը: Մրցաշարի ախոյեան հանդիսացաւ Հայաստանը ներկայացնող մեծ վարպետ Արսէն Եղիազարեանը, որ արձանագրեց 7 յաղթանակ եւ 2 հաւասարութիւն: 2րդ հանդիսացաւ արլայանցի Քարթանաք Իլիթը, իսկ երրորդ՝ եուկոյաւ Սթեֆան Ճիւրիք: Լիբանանի կազմին լաւագոյն արդիւնքը արձանագրեց Ահմէտ Նաթթար:

Մրցաշարին իր մասնակցութիւնը բերող կրտսերագոյն վարպետը եւ իրական սեռի միակ ներկայացուցիչն էր Հ.Մ.Ը.Մ-ական Քնարիկ Մուրատեան, որ արձանագրեց մէկ յաղթանակ եւ չորս հաւասարութիւն (որոնցմէ վերջինը՝ հայրենի վարպետ Եղիազարեանի դէմ): Քնարիկ Մուրատեան այսպիսով եղաւ լիբանանական կազմին միջնագոյնի դասաւորման առաւելագոյն կէտեր ապահովողը: Մրցաշարի փակման հանդիսաւոր արարողութեան ընթացքին Եւրոպայի ճատրակի ֆետերասիոնի նախագահ Գագիկ Օհանջեանն, կատարեց մրցաշարի ժամանակահատիկներու պարգևատրումը: Նշենք, որ Օհանջեանն Լիբանան կը գտնուէր իբրև ճատրակի ֆետերասիոնի պատուով հիւր եւ համագործակցութեան ծրագիրներ քննարկեց Լիբանանի մէջ կատարած իր հանդիպումներուն ընթացքին:

ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻԲԱՆԱՆԻ
ԿՐՏԱՐՆԵՐՈՒ ԽՄԱՅՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹ - ՌԻԱՏԻ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի կրտսերներու խմբային ախոյեանութեան Բ. հանգրուանի երկուսն իր կատարած մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Պեյրութ յաջողաբար պարտութեան մատնեց ժամհուրը (3-1) եւ Ռիաթի Պեյրութը (3-0): Իր արձանագրած այս յաղթանակն ետք Հ. Մ. Ը. Մ. Պեյրութ զբաւելով իր խմբակին պարագլուխի դիրքը, պայանագրեց կիսաւարտական հանգրուանին իր տոմսը, ուր այսօր կը մրցի Ռիատի դէմ, նկատի ունենալով, որ այս վերջինը գրաւեց իր խմբակին երկրորդ դիրքը: ● Լիբանանի փինկ փոնկի աղջկանց հաւաքականը, որ երկու ժամանեց Պանքոք (Ճափոն) մասնակցելու համար Ասիոյ ախոյեանութեան մրցաշարին, այսօր Շաբաթ կը կատարէ երկու մրցում, յաջորդաբար Հնդկաստանի (առաւօտեան ժամը 9:00ին) եւ Սինկափուրի դէմ (ժամը 13:00ին): Նշենք, թէ աղջկանց հաւաքականին մաս կը կազմեն Հ. Մ. Ը. Մ. կաններ Լիզա Պարիբեան, Լարա Քէչէպաշեան եւ Լարիսա Շըհէյա (Ռիատի):

«ԱՆԵՐԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵՂՈՒՆ
ՄԵԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՄՈՒՄԻ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը պատահուէ Ա. Նշան Մայր եկեղեցւոյ ծխատը
ԱՐԺ. Տ. ՍԿՐՏԻՉ ԲԸՆՅ. ԲԵՇԻՃԵԱՆ

● ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Չորեքշաբթի, 26 Փետրուար 2003, երեկոյան
ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնի համընթաց սալահին մէջ, Ուսթուար:

ՇՐԱԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱԳՐԸ՝ ՄԱՐԱՊՊԱ - Ը. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 16րդ եւ դարձի 3րդ հանգրուանի մրցումներուն, վաղը կ'իտրակի, Հ. Մ. Ը. Մ. Ֆուտպոլի ներկայացուցչական խումբը հիւրը պիտի ըլլայ Մահապպա Թրիփոլի: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 2:30ին, Թրիփոլի քաղաքապետարանի դաշտին վրայ: Վաղուան այս մրցումը, Հ. Մ. Ը. Մ. համար պիտի ըլլայ երկրորդ ճակատումը, այդ դաշտին վրայ: Երթի ճրգ հանգրուանի մրցումներուն (Կիւրակի, 8 Դեկտեմբեր 2002), Հ. Մ. Ը. Մ. հոն իր առաջին մրցումը կատարած էր հիւսիսեան այլ խումբի մը դէմ՝ Իթիփոնի Թրիփոլի դէմ եւ 5-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած: Հ. Մ. Ը. Մ. վաղուան մրցակիցը, որ երթին 5-2 արդիւնքով պարտութիւն մը կրած էր Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ (4րդ հանգրուանին), երթին իր դաշտին վրայ կատարած է հինգ մրցում, որոնց ընթացքին արձանագրած է երեք յաղթանակ եւ կրած՝ երկու պարտութիւն: Տեխնիկական անոր, արանիկայ այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 5րդ դիրքը եւ ունի 18 կէտ, սակայն կը նկատուի վստահաւոր խումբ մը, մասնաւորապէս իր նկատուի իրենց մրցակիցը: Հակառակ պարագրուի դիրքը գրաւելուն եւ ցարդ անպարտելի միակ խումբը ըլլալուն, Հ. Մ. Ը. Մ. պէտք է դաշտ ներկայանայ այն տրամաբանութեամբ, որ աւարտականի մրցում մը կը կատարէ: Վերստին Ա. դասակարգ բարձրանալու համար, խումբը իր կատարելիքը յառաջիկայ յանգրուաններուն ընթացքին ոչ իսկ մէկ կէտ պէտք է կորսնցնէ, առնուազան մինչեւ որոշ հանգրուան մը հասնիլը: Վստահարար Հ. Մ. Ը. Մ. մարզիկներէն կը սպասուի անցեալ շաբաթի Կիւրակի Մայրաքաղաքի դէմ, մրցակից կազմին մարզիկներուն եւ կամ իրաւարարին «ժուղակ» շինելու եւ անիմաստ տեղը դեղին քարտ չստանալ, ինչ որ վստահաբար խումբին հաշուոյն համար օգտակար չէ: Խումբին արձանագրելիք յաղթանակին մէջ իրենց մեծ բաժինը ունին

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ըլլոր մրցումներն այ տեղի կ'ունենան ժամը 2:45ին)

ԱՅՍՕՐ	ԴԱՇՏ
Իթիփոնի - Ռիատի	Պ. Համուտ
Հըրրի - Ռիատա Ուալ Ատապ	Պ. Համուտ
ՎԱԳՐ	Պ. Համուտ
Մահապպա - Հ. Մ. Ը. Մ.	Պ. Համուտ
Հ. Մ. Մ. - Նահատ	Սուր
Ահլի Մայրա - Շապ. Թրիփոլի	Սուր

● ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ երկու օր առաջ հրապարակեց նաեւ Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարին 1-16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, որոնք տեղի կ'ունենան յառաջիկայ Երեքշաբթի, 25 Փետրուարին եւ 26 Փետրուարին: 1-32րդ հանգրուանէն յետաձգուած միակ մրցումը՝ Պըրթի եւ Ամալ Մաարաքէի միջեւ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 26 Փետրուարին, Ահտի դաշտին վրայ, ժամը 2:30ին:

Ստորեւ՝ 1-16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ըլլոր մրցումներն այ տեղի կ'ունենան ժամը 2:30ին)

ԵՐԵՔՍԱԲԵԻ. 25 ՓԵՏՐՈՒԱՐ	ԴԱՇՏ
Ալա Սալի - Սալամ	Պէյրութ
Օլիմպիք - Շապապ Սահէլ	Պ. Համուտ
Անսար - Մապարա	Մ. Աւան
ՉՈՐԵՔՍԱԲԵԻ. 26 ՓԵՏՐՈՒԱՐ	Մ. Աւան
Թատամն Սուր - Նահատ	Փուրկի
Հ. Մ. Ը. Մ. - Սաֆա	Պէյրութ
Սաթե - Ահտ	Սաֆա
Ռիատա Ուալ Ատապ - Իսլահ	Սաֆա

● ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼՈՒ Համար Աթէնքի մէջ տեղի ունենալիք 2003ի Ողիմպիականի գտումի մրցումներուն, Լիբանանի Ողիմպիականի ֆուտպոլի ազգային խումբը, բարեկամական մրցումի մը ընթացքին, 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Քաթարի Ողիմպիականի խումբը, Տոհայի մէջ տեղի ունեցած մրցումին: 20րդ վայրկեանին Ապպաս Աթուէ նշանակեց Լիբանանի առաջին կողմ, մինչ Հ. Մ. Ը. Մ. մարզիկ Յակոբիկ Տոնապետեան 85րդ վայրկեանին արդիւնքը բարձրացուց երկուքի: Անոնց միջեւ երկրորդ բարեկամական հանդիպումը տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի, դարձեալ Տոհայի մէջ (Քաթար):

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ԸԱՅ ԿԱԹ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ LE BRISTOL

29 ՄԱՐՏ 2003

ԿՈՒՉՈՒԻ

Փորձառու վաճառող օրիորդ մը կոչիկի եւ պայուսակի վաճառատմ մը համար, Համրայի շրջան: Դիմել հեռ. 01-350834 եւ 03-453495:

ԿՈՒՉՈՒԻ

Վարպետ կաղապար շինող ոսկերիչ մը: Հեռ. 01-252054:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ԿԵՍԱՐԻՈՅ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԻԿԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

8 ՄԱՅԻՍ 2003

ԳՐՈՒ ԿԸ ՓՆՏՈՒ

ՉԵՆԻ ԿԱԽԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: ՀԵՆ. 03-876107:

ԿՈՒՉՈՒԻ

Վարպետ ոսկերիչ (սետերթ) մը եւ կապոյտ սոնի վարպետ մը: Դիմել՝ հեռ. 01-242549:

ԼՕՒԻ «ԱՐՑԱԵ» ՄԱՍՆԱԾԻՒՂ

ԵՐԹԱԿԱՆ Բ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 26 Փետրուար 2003ին, առաւօտեան ժամը 10:00ին «ԱՐԱՒԱԵԱՆ-Ը.Մ.Ը.Մ.» մարզաշաղկապային համալիրին մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը, երկու օր առաջ իր գումարած ժողովին, հրապարակեց Լիբանանի Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն յայտագիրը, որոնք կը սկսին յառաջիկայ 1 Մարտին: Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի խումբը, որ մաս կը կազմէ Լեռնալիբանանի նահանգին Ե. խմբակին, իր առաջին մրցումը պիտի կատարէ Շաբաթ, 1 Մարտին, ժամը 2:30ին Շեպիլպէի դաշտին վրայ՝ Սաֆա Շուէյթի դէմ: Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի կատարելիք մրցումներուն յայտագիրը:

ՀԱՐԱԹ. 1 ՄԱՐՏ	ԺԱՄ ԴԱՇՏ
Հ.Մ.Ը.Մ. - Սաֆա Շուէյթ ԿԵՐԱԿԻ. 9 ՄԱՐՏ	2:30 Շեպիլպէ
Հ.Մ.Ը.Մ. - Նահատա Շեպիլպէ	Շուէյթաք 12:30 Քաթարիմա
ԿԵՐԱԿԻ. 16 ՄԱՐՏ	
Հ.Մ.Ը.Մ. - Ռիատի Ժիէ ԿԵՐԱԿԻ. 23 ՄԱՐՏ	12:30 Ալէյ
Հ.Մ.Ը.Մ. - Նըսուր Ալէյ ԿԵՐԱԿԻ. 30 ՄԱՐՏ	3:00 Ալէյ
Հ.Մ.Ը.Մ. - Ժիհատ Հատաս ԿԵՐԱԿԻ. 6 ԱՊՐԻԼ	12:30 Պըրթ
Հ.Մ.Ը.Մ. - Սատա Սաֆա Պարուք ԿԵՐԱԿԻ. 13 ԱՊՐԻԼ	12:00 Շեպիլպէ
Հ.Մ.Ը.Մ. - Նըսուր Ալէյ ԿԵՐԱԿԻ. 20 ԱՊՐԻԼ	4:00 Քաթարիմա
Հ.Մ.Ը.Մ. - Սաֆա Շուէյթաք ԿԵՐԱԿԻ. 27 ԱՊՐԻԼ	4:00 Պհամտուն
Հ.Մ.Ը.Մ. - Հիլալ Նասըր ԿԵՐԱԿԻ. 4 ՄԱՅԻՍ	2:30 Ալէյ
Հ.Մ.Ը.Մ. - Չամալէք Շըիմ ԿԵՐԱԿԻ. 11 ՄԱՅԻՍ	4:30 Քաթարիմա
Հ.Մ.Ը.Մ. - Իսիլթալ	4:30 Պհամտուն

ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ՀԱՐԱԹԱՎԵՐՋԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Եւրոպայի ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներ տեղի կ'ունենան հետեւեալ յայտագիրին հիմամբ:

ՖՐԱՆՍԱ (28րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ
Կէնկան - Փարիզ Ս. ժ.

Մարսէյ - Լիլ
Պարիս - Նիս
Լանս - Մոնպելիէ
Լիոն - Ռէն
Նանթ - Ամսթըրդամ
Ստուտ - Պորտո
Սոչո - Լը Հաւը
Թրուա - Սթրասպուրկ

ՎԱԳՐ
Մոնպը - Օքսֆորդ
ԵՐԱՅԻՍ (22րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ
Հոմո - Եուրոպայի
Թորինո - Ա. Սէ. Միլան

ՎԱԳՐ
Պարիս - Էմփոլի
Պրեշա - Ռեհիս
Ինթեր Միլան - Փիսչենցա
Լացիո Ռոմա - Արալանթա
Մոտեա - Քիսո
Փերուզա - Փարմա
Ուտինտէ - Ա. Էս. Ռոմա

ՊՈՒՆԵՐԱԿԱ 22րդ ՀԱՆԳՐՈՒՄ

ԱՅՍՕՐ
Վերտըր Պրեմա - Քոթայու
Պայէրն Միլան - Նիւրնպերկ
Վոլֆսպուրկ - 1860 Միւնխ
Քայլերպայտըրն - Համպուրկ
Հանպա Ռոսթը - Պոլսո
Հանովեր 96 - Պայէր Լեյքթուրն
Շայք - Պորտուգա Տորնոսո

ՎԱԳՐ
Վերտըր Պրեմա - Արմինիա Պիրֆելտ
Շոտլանդ - Պոր. Մեյնըրկայապայ
ՄՊԱՆԻԱ 23րդ ՀԱՆԳՐՈՒՄ

ԱՅՍՕՐ
Ռէպա Մատրիտ - Ռէպա Վայառոլիտ
Տեփրոթիո Քորուս - Ալաւա
Պարսելոնա - Ռէպա Պերթա

ՎԱԳՐ
Սրիթթը Պիլպա - Մայորա
Մայալա - Սեյրա Վիկո
Հոնէլա - Սրիթթը Մատրիտ
Ռէպա Մոսկոտա - Օսասունա
Սեիլա - Էսփանիոլ
Վիարեալ - Ռասինկ Սանթանտէր
Ռալո Վարսաւո - Վարսաւա
ԱՆԳՐԱ 28րդ ՀԱՆԳՐՈՒՄ

ԱՅՍՕՐ
Պորթո - Մանչեսթըր Եունայթըտ
Չարլթըն - Ասթոն Վիլա
Չելսի - Պիթքլըր
Էվըրթըն - Ստուրթհէմքըն
Լիօ - Նիւքասլ
Մանչեսթըր Սիթի - Արսենալ
Սանտոքլիտ - Միտլըրկոպրո

ՎԱԳՐ
Պրեմիերլիգ - Լիվըրպոլ
Ռէպա Պրեմիեր - Ռէպա Համ
ԵՐԿՈՒՇԱԲԵՐ
Թորինո - Ֆուլիմ

**ՎԱԳՐԸ՝ ԿԵՐԱԿԻ, ԹՐԻՓՈՒԼԻ ՄԷՋ ՄԱՏԱՊՊԱԷ ԽՈՒՄԲԻՆ ԳԵՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ
ՄՐՅՈՒՄԻՆ ՏԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԸ ԱՊԱՏՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՕԹՈՊԻԻՒՄԻ ԶԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ԵԼԼԵՆ ՊՈՒՐՑ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԴԱՇՏԻՆ ԱՌՋԵԻԵՆ ԿԵՍՐՈՒՄԻՆ ԺԱՄԸ 12:00ԻՆ:**

